Աղթամարայ կղզին (Վանք)	} Վանայ ծովին	Կտուց (Վանք) Վանայ ծովին մէջ
Աւախը (անրնակ)		Թելա, Որմիղ ծովին մէջ
Լիւր (Վանք)		Սեւան (Վանք) Գեղամայ ծովին մէջ

7. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՈՒՍԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ, ԿԵՆԳԱՆԻՆԵՐՆ ՈՒ ՀԱՆԿԵՐԸ՝ բաղմաստեակ և յոյժ ճոխ են: Զանազան դարերու մէջ Հայաստանի հետ չիում ունեցող արեւմտեան պետութեանց զօրավարները, ճամրորդները, դեսպանները, գիտունները, տեղագիրները, բուսարան-կենդանաբան-հանքաբանները կարևոր յիշատակագրեր գրած են գիտութեան սեղանին վրայ:


*. Ծանօթութիւն. — Բուսարան Թուրքիոյ յետոյ, որ առաջին անգամ ճանչցուցած է բնիկ Հայաստանեան հրաշագեղ Անոպլանց Արիւնը (Anoplanthus Tournefortyi, Հայաստանի բուսաքննութիւնը կատարուած է հազիւ մէկ-քանի անձերէ: Այս ամրան (1918)՝ Պուտափէշթի Բուսաբանական Կաճառին կողմէ լոյս տեսած «Etude sur l'Herbier Artistique Tchitouny» (par G. V. Aznavour pages 1—38) անուն գրքոյկին մէջ՝ յարգելի բուսագէտը, Պոսեպի Տիար Գէորդ Աղնաուր, կ'գրէ (էջ 5).— «Արեւելքի, մասնաւորապէս Հայաստանի, բուսականութիւնովը հետաքրքրուողներուն ուշադրութիւնը կ'հրաւիրեմ Ձիթունիի «Վանաւան»ին վրայ, որ ի դէպ՝ կուգայ աւելի ընդարձակելու մեր ծանօթութիւնները՝ ցարդ քիչ բուսաբաղուած երկրի մը մասին: 1851էն 1912՝ այդ կողմերը քննողներէն ծանօթներն են Նօէ, Բօչի, Պարրէ աը Լանսի, Բրօնէնպուրկ, Տքթ. Փօսթ և Փրօֆ. Մանիսաճեան: Առաջին երեքը մեծ գործեր մը չունին. Բրօնէնպուրկը քաղած է հազիւ 150 տեսակ. Տքթ. Փօսթ 900ի չափ, Բրօֆ. Մանիսաճեան՝ 40էն աւելի: Բայց ամէնէն ճոխ Բուսարանը — Վանի բոյսերով — Ձիթունիին է, որ կ'պարունակէ հազարիւն աւելի տեսակներ: Ասոնցմէ 242 տեսակ ինքնաբոյս ծաղիկներուն քննութեան միջազգային բուսաբանութեան բոլորովին նոր 10 տեսակներ ծանօթացուցան. 1. Paeonia Kavachensis, 2. Gypsophila

diaphylla, 3. *Linum vanense*, 4. *Trifolium Parantzemae*, 5. *Sedum pulchellum*, 6. *Parnassia vanensis*, 7. *Lactuca vanensis*, 8. *Campanula Tchitounyi*, 9. *Solenanthus Tchitounyi*, 10. *Tulipa Tchitounyi* » :

Քննուած 242 տեսակէն զատ՝ մնացածները պիտի քննուին ապագային, եթէ քաղաքական և նիւթական միջոցները նպաստաւոր ըլլան :

Հայաստանի կենդանարանութեան և հանքարանութեան մասը կարելի է ըսել՝ անկոխ կայուած մ'է մնացեր մինչեւ այսօր : Զուտ կենդանարաներու և հանքարաներու միջերը հաւաքելու խղճամիտ ու յարատեւ ջանքեր ըրած եմ անձնապէս 1898էն ի վեր :

9.



Լեզուարանական ծառ.

8. ՀԱՅԵՐԷՆ ԼԵՋՈՒՆ. — Լեզուարանները վերջին համեմատական գննութիւններէն յետոյ հաստատեցին որ հայերէն լեզուն՝ հնդեւրոպական անկախ և ինքնուրոյն լեզու մ'է, (indo-européen) իրեն յատուկ բազմաթիւ բարբառներով և ամէնահին ու հարուստ գրականութեամբ, որ ունեցած է իր Ոսկեդարը նոյն իսկ ա'յն շրջանին (Քս. վերջ 400ին)՝ երբ արդի եւրոպական ազգերը կազմակերպեալ վիճակ չունէին Յոյներէ և Հռովմայեցիներէ զատ: (Տես Հայ Մասնագիրները՝ համար 18:)

9. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԱՂԱՔԱԿԱՆ ԿԵՍՆԻՐԸ. — Մեծ և փոքր-Հայքէ կազմուած պատմական Հայաստանը՝ իր 18 նահանգներուն մէջ՝ ունէր 620 գաւառ, 40,000է աւելի զիւղեր, ընդ ամէն 40,000,000 (40 /



Հայկ Գահապետ

միլիոն) բնակչով: Երկրին պահպանութեան համար կ'պահէր միջին հաշուով 120,000 զօրք, և հողեր որ հսկողութեան համար՝ աւելի քան 200 եպիսկոպոս:

Հայոց Ազգին գոյութեան սկիզբը կ'հաշուուի աւանդաբար՝ Քրիստոսէ 25 դար առաջ (2492ին, ըստ Վրաց պատմիչներուն՝ 2543ին) երբ Հայոց նախահայրը Հայկ՝ առաջին անգամ ոտք կը կոխէ Այրարատ նահանգը: Այս հաշուով՝ Հայ Ազգը 4,400 տարւան պատմական կեանք մը կ'ցուցնէ ներկայիս:

Իր քաղաքական կեանքին սկիզբն առնելով Հայկէն [Խորենի. Ա.], Հայաստան ունեցեր է հետեւեալ հարստութիւնները (dynastie). — Իշխանապետութիւն և Թագաւորութիւն. —

		Թուական	Տարի
1. Հայկազանց	Թագաւորութիւն	Ք. Ա. 2492— 330	2162
	(Haikazian)		
	— Անիշխանութիւն	» » 300 — 150	180
2. Արշակունեաց	Թագաւորութիւն	» » 150 — 432 Ք. Յ.	582
	(Arsacides, Archagounik)		
	— Անիշխանութիւն	Ք. Յ. 432 — 885	453
3. Բագրատունեաց	Թագաւորութիւն	» » 885 — 1045	160
	(Bagratides, Bagratounik)		
	(Եւս' Արծրունեաց Թագերին.)	» » 905 — 1080)	...
	— Անիշխանութիւն	» » 1045 — 1080	35
4. Ռուբինեանց	Թագաւորութիւն	» » 1080 — 1375	296
	(Roubinian, Cilicie)		3868
	— Անիշխանութիւն	» » 1375 — 1918	544
Ըստ Մատենադարանի Հայոց ծագումն մինչև հիմա՝ 44 դար			4412

Ըստ քննական արդի պատմութեան՝ Հայ Ազգին ծագումը հաշուելով Ք. Ա. 885ին, կ'ունենայ շուրջ 30 դարու անցեալ մը, հետեւեալ բաժանումներով. —

		Թուական	Տարի
Նախնայ շրջան		Ք. Ա. 885 — 323	563
Հայ Թագաւորութիւն		» » 323 — 220	104
	— Անիշխանութիւն	» »	29
Արտաշիսեան Հարստութիւն		» » 190 — 2	189
Օտար Հարստութիւն	Ք. Ե.	2 — 53	52
Հայ Արշակունիք		» » 53 — 429	377
	Մարզպանները	» » 430 — 591 (634)	162 (205)
	Կիրապազատները	» » 591 — 654 (705)	64 (115)
	Ոստիկանները	» » 654 — 861	203
	Անիշխանութիւն	» » 861 — 885	25
Բագրատունիք (Արծրունիք)		» » 885 — 1080	195
Ռուբինեանք		» » 1080 — 1375 (1393)	296
	Անիշխանութիւն	» » 1375 — 1918	544
			2808

Հայկազանց Թագաւորներէն նշանաւոր եղած են՝ Հայկ, Արամ, Չարմայր, Տիգրան Երուանդեան, Վան ևն.՝ մայրաքաղաք ունենալով՝ Արմաւիր, Արտաշատ, Վան:

Արշակունի Թագաւորներէն՝ Վաղարշակ (Ք. Ա. 149—127), Արտաշէս Ա. (114—89), Արտաշէս Բ. (89—129), Մեծն Տիգրան Բ. (89—35), Խոսրով (Ք. Յ. 214—259), Մեծն Տրդատ (286—341), Մեծն Արշակ Բ.

(363—381), Վռամշապուհ (392—415) ևն.՝ մայրաքաղաք ունենալով՝ Արտաշատ, Արմաիր, Երուանդաշատ, Վաղարշապատ (հիմնուած՝ 197ին), Եղեսիա կամ Ուրֆա (Միջագետք), Մծրին կամ Նիսիրին (Միջագետք)։ Գուին (հիմն. 348ին) ևն.։

Բագրատունիներէն՝ Աշոտ Ա. (885—889), Աշոտ Բ. «Երկաթ» (914—928), Աշոտ Գ. «Ոգորմած» կամ «Շահի Արմէն» (952—977), Գագիկ Ա. «Շահնշահ» (989—1020), մայրաքաղաք՝ Երազգաւորս (Շիրակաւան),



Ահուստան Սոսանուէր

Բագարան, Անի (հիմն. 961ին), Կարս (928ին), Բաքուդ ևն.։ Արծրու-
նիներէն Գագիկ «Մեծագործ» ևն., ևն.։

Ռուբինեաններէն՝ Մեծն Ռուբէն Ա. (1080—1905), Կոստանդին Ա. (1096—1100), Թորոս Ա. (1100—1125), Մեծն Լեւոն Բ. (1185—1219), Զապէլ (1219—1252), Հեթում Ա. (1224—1269), Լեւոն Լուսինեան Ե. (1365—1375)՝ մայրաքաղաք ի Կիլիկիա՝ Վահկայ բերդ, Տարսոն, Սիս, Լամբրոն։

10. ՀԱՅ ԳԻՅՍՆ. — Հայոց նախնական պաշտամունքին առարկան էր Բնութիւնը։ Բնապաշտ նախնիքը պաշտօն կը տանէին Արեւին, Լուսնին, աստղերուն։ Կը պաշտէին Երկինքն ու Երկիրը, Օրը (Տիւ), Համաստեղութիւնները (Օրիոն), Կրակը (արեւ, թոնիր, օճախ)։ Աւելի վերջը պաշտեցին ձեռակերտ կուռքեր, անոնց հետ նաև ջուրը, ծառերը, մայրուերը, կենդանիները, ոգիները ևն.։

Հեթանոս — բնապաշտ թէ կռապաշտ — Հայերու նշանաւոր աստուածներն են հետեւեալ զիք և զիցուհիք.—

ԱՐԱՄՍԶԴ, Բարի Աստուած. ասեղծողը մարդկային ազգին. հայր Աստուածներուն ու Դիւցազուններուն. ճարտարայես տիեզերքին: Մե-



Ա.բամազդ

եանը կը գտնուէր Անի կամ Կամախ ամրոցին մէջ (Երիզա): Իր մակ-
դիրներն էին՝ «Շանքաձիզ, Ամպրուպային, Մեծն Արին Արամազդ, Հայր
Աստուածոց եւ սիւզերաց ու արարածոց»: Jupiter, Zeus.

ԱՆԱՀԻՏ, Մայր Դիցուհի. «Ոսկեծին, սպիտակ, ոսկեմայր Անա-



Ա.ճահիտ

մատար մայր-դիցուհին էր: Ըստ Ասորեստանցիներու՝ Բելտիս կամ Բի-
լատ=Տիկին, ըստ Յոյներու՝ Արտեմիս (Artémis): Իր արձանը ներկայաց-
ուած է սաքի կեցած, ձախ ձեռքովը որսի կրէի մը կոտորչներէն բռնած:

թեան. Փառք ազգիս մերոյ. Շունչ
և կեցուցիչ Աշխարհին Հայոց.
ճնունդ՝ Մեծին Արին-Արամազդայ»: Խորհրդանշան՝ ճամեստութեան, մայ-
րութեան և լրջութեան:

Հայերը ամէն տարի, Ամանորին,
մեծանանդէս կը տօնէին Անահիտի
տօնը, վարդ կը ցրուէին բազինին
առջևը, սպիտակ աղաւնիներ կը
թոցնէին մեհեանին շուրջը: Այսօր
այս տօնը փոխարինուած է վարդա-
վառով: Մեհեանները՝ Երէզ աւան
(Երզնկա), Աշտիշատ (Տարօն-Մուշ):
Diana.

Ժամանակին ամենէն շատ յար-
գուած, ազգային սիրեցեալ և խնա-

ՎԱՀԱԳՆ, Յարրուքեան Աստուած. Ծիրանի ծովէն ու հուրէն ծնած. կրակէ մազերով, բոցամորուս և արեւաչուի («Երկնէր երկին և երկիր, երկնէր և ծիրանի ծով...»), Խրնցի. Ա. ԼԱ.): Մակղիրնբը՝ «Հրածին,



Վահագն Եարդգոյ

Բոցակն, Բոցաւորուս, Վիշապախ, Վահեմանեան Վահագն: Իր խորհրդանկարն է Ծիր-Կաթին (Voie-Lactée) երկնից մէջ: Մեհանը՝ Աշտիշատի մէջ (Տարօն) որ կը կոչուէր Վահեմանեան մեհեան: Heracles.

ԱՍՏՂԻԿ, Արամազդի աղջիկը. զիցունի գեղեցկութեան, սիրոյ, ծննդարեւորութեան ու շնորհմեհու. Հայ Աշխարհի ամենասիրելի աստուածուհին: Մակղիրնբը՝ «փրփրածին, ծովածին, ծովանուշ. վարդաւասն Աստղիկ, Լուսաբեր, Արուսեակ, Արշալոյս»: Venus. Aphrothide.

ՆԱՆԷ, Աստղիկին քոյրը, աստուածուհի՝ գեղարուեստի, պաշտպան՝ ընտանեկան յարկին, ու տանտիկին: Մեհեան ի Թիլ աւան (Երիզա): Athénas Pallas. Minerva.

ՏԻՐ կամ ՏԻԻՐ, Արամազդի գրագիրը. «Դիւան գրչի Արամազդայ. երազամոյն, ասուած՝ զիտութեանց, ուսմանց և դպրութեանց»:

ՄԻՀՐ, Արամազդի որդին, աստուած՝ բոյսի և ջերմութեան:

ԲԱՐՇԱՄԵԱՆ ԴԻՐ, կամ Սպիտակախառ Դիլ (փղոսկրէ, բիւրեղէ և արծաթէ շինուած ըլլալուն համար). մեհեանը՝ Թորդան աւան:

Ասոնցմէ զատ կային նաև Հայկ կամ Օրիոնը, Ամանոր կամ Վանա-



Օրիոն

սուր «ամենաբեր, հիւրընկալ» աստուածը. Առիկ կամ Յարսիկ բուժիչ
 ոգիները. Բայջերը, Յաւեժանարանները, Պարիկները՝ իբր բարի ոգիներ:
 Եւ Ալիբը, Թարդաները, Կրողները՝ իբր չար ոգիներ:



Մեհեմեդական պառսամուճ

Գլխաւոր մեհեմեդներն էին Անի, Աշտիշատ, Երեզա, Թիլ, Թորդան,
 Բագաւան, Բագոյառիճ, Արտաշատ:

11. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԹԱԳԱՒՈՐՆԵՐՈՒՆ ԱԶԳԱՅՈՒՑԱԼԸ. —

Ա. ԱՒԱՆԴԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԵՆԷՆ

1. — ՀԱՅԿԱԶԱՆՅ ՀԱՐՍՏՈՒԹԻՒՆ (Դրուած թուականները ենթադրական են)

(Եւխաններ)		Առնակ	
Հայկ նահապետ (Բ. Ա. 2350)		Շաւարշ	}
Արմենակ	}	Նորայր	
Արմայիս		Վատամ	
Ամասիա		Կար	
Գեղամ		Գոռակ	
Հարմայ		Հրանտ	
Արամ		Բնձաք	
Արայ Գեղեցիկ		Գղակ	
Աբայեան Արայ կամ		Հօրայ	
Կարդոս		Զարմայր	
Անուշաւան		Պերճ	}
Պարէտ	Աբբուն		
Աբբակ	Հոյ		
Զաւան	Յուսակ		
Փառնաս	Կայպակ		
Սուբ	Սկայորդի		
Հաւանակ			
Վաշտակ			
Հայկակ Ա.			
Ամիակ			
		(Թագաւորներ)	
		Պարդր	}
		Հրաչեայ	

(Թագաւորներ)

(870—330)

Փառնուս	} (870—330)	Վահագն	} (870—300)
Պաճղճ		Առաւան	
Կոռնակ		Ներսէս	
Փաւոս		Զարեհ	
Հայկակ Բ.		Արմոզ	
Երուանդ Ա. Սա- կաւակեաց		Բագամ	
Տիգրան Ա.		Վան Վահէ	

2. — ԱՐՇԱԿՈՒՆԵԱՅ ՀԱՐՍՏՈՒԹԻՒՆ

Վաղարշակ (Ք. Ա. 150—128)	Խոսրով Ա. Մեծ (213—261)
Արշակ Ա. (128—115)	Անիշխանուրբեան ժամանակ (261—286)
Արտաշէս Ա. (115—90)	Տրդատ (286—342)
Տիգրան Բ. = Մեծն Տիգրան (90—36)	Խոսրով Բ. (342—350)
Արտաւազդ Ա. (36—33)	Տիրան Բ. (350—361)
Արշամ (33—3)	Արշակ Բ. (362—382)
Արշար (Ք. Ա. 3—Ք. Ե. 34)	Պապ (385—392)
Անանուն (34—35)	Վարազդատ (392—395)
Սանատրուկ (35—65)	Արշակ Գ. (395—401)
Երուանդ Բ. (65—85)	Խոսրով Գ. (398—402)
Արտաշէս Բ. (85—126)	Վաստշապուհ (402—424)
Արտաւազդ Բ. (126—130)	Խոսրով Գ. կրկին անգամ (424—425)
Տիրան Ա. (130—151)	Շապուհ (425—428)
Տիգրան Գ. (151—193)	Արտաշիր (428—433)
Վաղարշ (193—213)	

Բ. ՔՆՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԵՆԷՆ

1. — ՆԱԽԱՀԱՅ ՇՐՋԱՆ

Ա. Ա.	ժամանակակից	Աշտուրնացիւրաբալի (885—860 Ք. Ա.)
Արամէ Լ	}	Սաղմանասար Բ.ի (860—824)
Սարգուրիշ Ա.		
Իշպուհինի	}	Շառնի-Աղաղ Գ.ի (824—812)
Մենուաշ Լ		
Իսուշպուաշ	}	Աղաղ-Նիրարի Գ.ի (812—783)
Արգիշտիշ Ա.		
Արգիշտիշ Ա. Լ	}	Աշտուրղանան Գ.ի (772—754)
Սարգուրիշ Բ.		
Սարգուրիշ Բ.	}	Աշտուրնիրարիի (754—745)
Սարգուրիշ Բ. Լ		
Թուսաշ Ա.	}	Թագաղաթփաղասար Գ.ի 745—727)
Թուսաշ Ա.		
Թուսաշ Ա. Լ	}	{ Բէլխարրան-Բէլուցուրի (727) և Սաղմանասար Գ.ի (727—722)
Արգիշտիշ Բ.		
Արգիշտիշ Բ. Լ	}	Սարգոնի (722—705)
Թուսաշ Բ.		
Էրիմէնաշ	}	Սարգանի (681—668)
Թուսաշ Գ. Լ		
Սարգուրիշ Գ.	}	Սարղանաբաղի (668—625)

2. — ՍԿԶԲՆԱՒՈՐՈՒԹԻՒՆ ՀԱՅ ԺԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ

Փրատափեռնէս կամ	} Հայաստանի տէր կը դառնայ (Ք.Ա. 323)	Արդուատէս կամ	} (301)
Նէսպտղովէս		Արդուօրդ	
Որոնտէս կամ	} (322—301)	Արտաբաղանէս կամ	} (239—220 ?)
Հրանտ եւ կամ		Արտաւազ	
Երուանդ		Որոնտէս	(220 ?)



Խոսրովի թագաւորի յարգումը Օսու

3. — ԱՐՏԱՇԻՍԵԱՆ ՀԱՐՍՏՈՒԹԻՒՆ

Արտաքրիաս կամ Արտաշէս Ա. (Ք. Ա. 190—159)	Արտաւազդ Գ. (56—34)
Արտաւազդ Ա. (159—149)	Աղեքսանդր (34—31)
Տիգրան Ա. (149—123)	Արտաշէս Բ. (30—20)
Արտաւազդ Բ. = Արտուաղիստոս (123—94)	Տիգրան Գ. (20—12)
Տիգրան Բ. = Մեծն Տիգրան (94—54)	Տիգրան Դ. } (Ք. Ա. 12—5 եւ 2—1 Ք. Ե.)
	Արտաւազդ Դ. (Ք. Ա. 5—2)

4. — ՕՏԱՐ ՀԱՐՍՏՈՒԹԻՒՆ

Արիստարկան (2 Ք. Ե.)	Արտաշէս Գ. = Չերնոն (18—34)
Արտաւազդ Ե. (2—11)	Արշակ Ա. (34—35)
Տիգրան Ե. (11—14)	Միհրդատ (35—37 եւ 47—51)
Վրնոն (16—17)	Հուդամիստ (51—53)

5. — ՀԱՅ - ԱՐՇԱԿՈՒՆԻՒՄ

Տրդատ Ա. (53—59 եւ 66—100)	Բակուր (162—163)
Տիգրան Զ. (60—62)	Սանատրուկ (178—216)
Աշխարհ (100—113)	Վաղարշ Բ. (178—217)
Պարթամասիրիս (113—114)	Տրդատ Բ. կամ Խոսրով Ա. Մեծ (217—238)
Պարթամասպատէս (116—117)	Տրդատ Գ. (250—252 եւ 283—294 եւ 298—230)
Վաղարշ Ա. (117—140)	
Աղեմոս (140—161 եւ 163—178)	

Արտաւազը Զ. (252—261)	Արշակ Գ. (378—389)
Խոսրով Բ. Կոտակ կամ Փոքր (331—339)	Վաղարշակ (378—386)
Տիրան (340—350)	Խոսրով Գ. (386—392 եւ 414—415)
Արշակ Բ. (351—367)	Վրամշապուհ (392—414)
Պապ (369—374)	Շապուհ (416—420)
Վարազդատ (374—378)	Արտաշէս Դ. (423—429)

6. — Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Մ Ա Ր Զ Պ Ա Ն Ն Ե Ր Ը

Վեհմիհրջապուհ (430—438)	Տամ Խոսրով (578—580)
Վասակ Սիւնի (438—451)	Վարազ Վզուր (580—581)
Ատրորմիզը (451—465)	Մեծ սպարապետն Պարթև-Պահլավ (581—588)
Ատրվշնասպ (465—481)	Հրահատ (588—588)
Սահակ Բագրատունի (481—482)	Հրարտին Դատան (588—590)
Շապուհ Միհրանեան (483—484)	Վրնդատական Նիխորական (591—?)
Անդեկան (484—485)	Մերակըուտ (594—598 ?)
Վահան Մամիկոնեան (485—505)	Յազդէն (598—600 ?)
Վարդ Մամիկոնեան (505—509)	Բուզմահ (600 ?—604)
. (?)	Հոյիման (604—608)
Ա. Նիխորական (548—552 ?)	Աշտատ Յեզտոյար (608—610)
Վշնասպ Վահրամ (552—554)	Շահէն պատգոսապան (611—612)
Դենշապուհ (554—560 ?)	Շահրապետնպետ (612—613)
Վարազդատ (560—554 ?)	Պարտեանպետ Պարշընազդատ (613—?)
Սուրէն (594 ?—572)	Նամբարուն Շոնապա (616—619 ?)
Վարդան Վշնասպ (572—573)	Շահրապազական (620—624 ?)
Գողոն կամ Վզոն Միհրան (573—573)	ձուռն կամ Ռոճ Վեհան (624 ?—627)
Փիլիպպոս Սիւնեաց տէր (573—578)	Վարազտիրոց Բագրատունի (628—634)

7. — Յ Ո Ւ Ն Ա Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Կ Ի Յ Կ Ա Ռ Ա Վ Ա Ր Ի Զ Ն Ե Ր Ը

Յովհան Պատրիկ (591)	Սմբատ Վարազտիրոցեան, կիւրապազատ (646—656 ?)
Հերակլ, զօրավար (594)	Թէոդորոս Ռշտունի (կրկին), զօրավար (646—653)
Սուրէն, զօրավար (604)	Մօրեանոս, զօրավար (653)
. (?)	Պռոկոպ, զօրավար (653)
Մժէժ Գնունի, զօրավար (630—635)	Համազասպ Մամիկոնեան, կիւրապազատ եւ պատրիկ (658—661)
Դաւիթ Սահառունի, կիւրապազատ (635—638)	Սմբատ Բագրատունի Սմբատեան, կիւրապազատ (703—705)
Թէոդորոս Ռշտունի, զօրավար եւ պատրիկ (641—646)	
Թումա (646—646)	
Վարազտիրոց Բագրատունի, կիւրապազատ (646—646)	

8. — Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Ո Ս Տ Ի Կ Ա Ն Ն Ե Ր Ը

Թէոդորոս Ռշտունի (654—658)	Սեթ Հարաշի 726 ?—727 ?
Մուշեղ Մամիկոնեան (658—660)	Մրուան (728 ?—744)
Գրիգոր Մամիկոնեան (661—685)	Իսահակ (745—750)
Աշոտ Բագրատունի (685—688)	Եզիդ Ա. (751—760)
Սմբատ Բագրատունի Սմբատեան (688—703)	Բազար կամ Պաքար (760 ?—761 ?)
✓ Աբդուլա (703—705)	Հասան (762 ?—775)
Կամ (705—706)	Եզիդ Բ. (775—780 ?)
Աբդուլազիզ (706—725 ?)	Օթման (780 ?—785)

- | | |
|---------------------|-----------------------------------------------------------------|
| Ռոհ (785—785) | Խուղիմա (796—806) |
| Խազմ (785—786) | Հօլ (807—847) |
| Եղիշ Գ. (786—787) | Ապուստօթ (847—851) |
| Աբդալբեր (787—787) | Յովսէփ կամ Եուսուֆ (851—851) |
| Սուլէյման (787—790) | Աշոս Բագրատունի Սմբատեան, սպարապետ (856) եւ Էշխանաց Էշխան (861) |
| Եղիշ Գ. (790—795) | |

9. — ԲԱԳՐԱՏՈՒՆԵԱՅ ՀԱՐՍՏՈՒԹԻՒՆ

- | | |
|---------------------------|------------------------------------------|
| Աշոտ Ա. (885—890) | Սմբատ Բ. Տիեզերակալ (977—989) |
| Սմբատ Ա. (890—914) | Գաղիկ Ա. Շահնշահ (989—1020) |
| Աշոտ Բ. Երկաթ (914—929) | Սմբատ Գ. կամ Յովհաննէս Սմբատ (1020—1042) |
| Աշոտ Բունակալ (921) | Աշոտ Դ. (1020—1042) |
| Աբաս (929—953) | Գաղիկ Բ. (1042—1045 † 1079) |
| Աշոտ Գ. Ողորմած (953—977) | |

Կարուց քաղաւորութիւն

- Մուշեղ (962—984)
- Աբաս (984—1029)
- Գաղիկ (1029—1064 † 1080)

Աղուանից քաղաւորութիւն

- Դաւիթ Անհողին († 1046)
- Կորեկէ կամ Կիւրեկէ (1046—1082 †)

10. — ԱՐԵՐՈՒՆԵԱՅ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ

- | | |
|-----------------------------|-------------------------------------------|
| Խաչիկ-Գաղիկ (914—943) | Սեֆեքերիմ - Յովհաննէս (990 — 1016 † 1026) |
| Դերեհիկ-Աշոտ (943—958) | Դաւիթ, Է Սեբաստիա (1027—1037) |
| Աբուսահլ-Համազասպ (958—968) | Ասով, Է Սեբաստիա (1037—1080) |
| Աշոտ-Սահակ (968—990) | Արուսանդ, Է Սեբաստիա (1037—1080) |
| Դուրդէն-Խաչիկ (990—1003) | |

11. — ՌՈՒԲԻՆԵԱՆ ՀԱՐՍՏՈՒԹԻՒՆ

- | | |
|-----------------------------|---------------------------------|
| Ռուբէն Ա. (1080—1095) | Հեթում Բ. (1289—1297) |
| Կոստանդին Ա. 1095—1099) | Թորոս (1293—1295) |
| Թորոս Ա. (1099—1129) | Սմբատ (1297—1298) |
| Լեւոն Ա. (1129—1137 † 1141) | Կոստանդին Ա. (1298—1299) |
| Թորոս Բ. (1145—1169) | Լեւոն Գ. (1301—1907) |
| Մլիհ (1170—1175) | Օշին (1308—1320) |
| Ռուբէն Բ. (1175—1186) | Լեւոն Դ. (1320—1342) |
| Լեւոն Բ. (1186—1196) | Կի կամ Կոստանդին Բ. (1342—1344) |
| Լեւոն Ա. (1196—1219) | Կոստանդին Գ. (1344—1363) |
| Զապիկ (1219—1252) | Լեւոն (1363—1365) |
| Ֆիլիպ (1222—1225) | Կոստանդին Դ. (1365—1373) |
| Հեթում Ա. (1226—1270) | Մարիամ (1373—1374) |
| Լեւոն Բ. (1270—1289) | Լեւոն Ե. (1374—1375 † 1393) |

[Կ. Յ. Բասմաչեան, «Ամն. Տրց.» 1914 Պսմ. Դարբեր. «Բնսեր.» եւն.]

12. ՀԱՅ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐՆ ՈՒ ԲԱՆԱԿԱՆՈՒՄԲԸ. — Հայաստանի զինուորական կազմակերպութիւնը, զարգացած և ուժեղ ազգի մը պատկերը կուտայ: Քաղաքային ու զինուորական պաշտօններու կանոնաւոր բաշխումի մը համաձայն՝ Արքունի Դուռը կամ Գահը

իր շուրջը կը համախմբէր Ազատներու, Կարճազատներու և Գեղջուկներու երեք դասերուն ներկայացուցիչները և զօրքը:

Թագաւորին արքայակից էր Թագուհին: Արքունիքի սպասարկուներն էին Ներքինապետը, Սպասկապետը և Մանկաւարիկը՝ իրենց երկրորդական ծառայողներուն հետ:

Արքայէն յետոյ, Գահին շուրջը, իրենց մասնաւոր Աթոռն ունէին, կարգով՝ բոլոր արգադիր, զօրատու և հարկատու նախարարութիւնները, որոնց թիւը մինչեւ 900ի հասած էր: Վաւարական կամ Սահակեան Գահնամակին մէջ յիշուած են անոնցմէ 80ին անուններն ու կարգը:

Արքայէն անմիջապէս յետոյ կուգար Երկրորդն Արքայի կամ Մուրացան Նախարարութիւնը, որ կը կոչուէր նաև Իշխանաց Իշխան: Ապա աստիճանաբար կուգային՝ Հազարապետ Հայոց, Հրամանատար, Իշխան Հայոց, Մարդպետ, Թագաւորահայր, Աթարէկ, Մաղխազ կամ Խաղաղապետ, — ըստ Դարուն (Ա.—ժ.Գ.դ. դար):

Արքունի կամ Դրանիկ, Ոստանիկ գունդէն զատ՝ բուն երկրապահ բանակը կը բաժնուէր չորս թեւի կամ Դուռի. — Հիւսիսային, Արեւելեան, Հարաւային, Արեւմտեան: Զօրատու 80—120 զինապետ-նախարարութիւններուն համախմբած զօրքին թիւը 120,000 էր, ըստ Տիրամայր զբազխուհիին կազմած նշանաւոր բանակացոյցին. —

1. ԱՐԵՒԵԼԵԱՆ-ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԹԵՒ

1. Սիւնի	19,400
2. Ամասկոնի	200
3. Աւտցածին	200
4. Վարձառուների	200
5. Տամբերացի	100
6. Մաղաղացի	500
7. Յողկեպան	100
8. Գրըզճուների	50
9. Վառնուների	50
10. Բաքան	50
11. Կճբուների	50
12. Գուկանն	50
13. Պատսպարուների	50
14. Գաղըրիկան	50
15. Վիժ անուների	50
16. Զանդաղան	50
17. Սողացի	50
18. Աքածեցի	50
19. Ասճշեան	50
20. Կինան	50
21. Տաղբեան	50

2. ՀԻՒՍԻՍ-ԱՐԵՒՄՏԵԱՆ ԹԵՒ

1. Կաղմէացի	13,200
2. Կորդուացի	1,000
3. Արծրունի	1,000

4. Ոշտունի	1,000
5. Մոկացի	1,000
6. Գողթնեցի	500
7. Անճեւացի	500
8. Հարուժեան	100
9. Տրպատունի	100
10. Մեհնունի	100
11. Ակէացի	300
12. Զարէհուանեայ	300
13. Երանթունի	300
14. Համաստունեան	100
15. Արտաշեսեան	300
16. Սաղբատունի	100
17. Աքրահամեան	100
18. Տըբունի	300
19. Բուժունի	200
20. Քաջբերունի	100
21. Բողունի	100
22. Մուրացան	300

3. ԱՐԵՒՄՏԵԱՆ-ՀԱՐԱՒԱՅԻՆ ԹԵՒ

1. Ռափսեան	100
2. Սպանդունի	300
3. Վարժնունեան	100
4. Առուեանեան	300
5. Այծեանական	100
6. Վարժնունի	300

7. Սաղկունի	300	3. Չիւնական	300
8. Մանգակունի	300	4. Սահառունի	300
9. Ընծաքին	4,000	5. Հաւնունի	300
10. Պալունի	300	6. Աբեղեան	300
11. Բասենացի	600	7. Գաբեղեան	300
12. Գընունի	500	8. Բոխայեցի	300
13. Աղահունի	1,000	9. Կնթունի	300
14. Վահունի	1,000	10. Դիմաքեան	300
15. Ծովացի	1,000	11. Աշոցեան	500
16. Խոռխոռունի	1,000	12. Առուեղեանքն	500
17. Բագրատունի	1,500	13. Որդունի	700
18. Մանաւաղեան	1,000	14. Դարդամնեցին	1,000
19. Բզնունեան	3,000	15. Վանանդացին	1,000
20. Բղեշին Աղձնեաց	4,000	16. Մամիկոնեան	1,000
21. Անդեղ Տուն	3,400	17. Տայեցի	600
		18. Ծաղէացի	1,000
4. ՀԱՐԱՒԱՅԻՆ-ԱՐԵՒԵԼԵԱՆ ԹԵՒ		19. Ուտէացի	1,000
1. Վարազարտիկեան	100	20. Կասպեցի	3,000
2. Աշխադարեան	100	21. Կամարական	600
		22. Բղեշի Դուզարաց	4,500


— «Եւ լինի թիւ մարտիկ արանց որ ընդ ազգօք՝ ՉԴ.ից հազարաց, թող զսպասաւորս զբանն արքունի՝ որ է Ոստանդ, որք ի պատերազմ ելանէին ընդ արքայի. եւ Մարդպետական, որ է ներքինի պահապան ի վերայ թագունւոյն եւ զանձացն: Եւ ընդ ամենայնն՝ թիւ զօրոցն Հայոց՝ որ է հարիւր ե քսան հազարաց»:



Արցախի Ա. սիւնը կը ծակէ

13. ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆՑ ՄԱՍԵՐԱՔԱՂԱՔՆԵՐԸ. — ԱՂԹԱՄԱՐ, Aghtamar, Արծրունեաց Գաղիկ թագաւորին օրով (915ին). Վանայ ծովին մէջ. նշանաւոր է եկեղեցին. Աթոռ՝ Աղթամարայ կաթողիկոսութեան:

ԱՆԻ, Ani, հիմնուած 961ին՝ Աշոտ Բագրատունի թագաւորէն, արքայանիստ, կաթողիկոսանիստ. 1001 եկեղեցի, հոյակապ պալատներ ու շէնքեր, մէկ միլիոն ընտկիչ (Բագրատունեաց շրջանին). 1046ին, 1239ին, 1319ին յաջորդարար կործանուած՝ բարբարոսներէ: Փրօֆ. Նիկոլա-Մառ



ԱՆԻ ԲԱՂԱՔ

և Թորոս Թորոմանեան ԺԹ.րդ դարուն՝ պեղումներով երևան բերին կործանած Անին, որ իր հայկական ճարտարապետութեամբ սքանչացող Եւրոպացիները:

ԱՐՄՍԱԻՐ, Armavir, հիմնուած Հայկազն Արմաշիս թագաւորէն՝ Այրարատ նահանգին մէջ. մայրաքաղաք՝ աւելի քան 2000 տարի:

ԱՐՏԱՇԱՏ, Artachat, հիմնուած Ք. Ա. 183ին, Երասխի ափը, Արտաշէսէ՝ (Աննիբալի խորհրդով), մեհնաւաճար. նշանաւոր մայրաքաղաք մինչև Ք. Յ. 500ին: Այժմ՝ փոքրիկ գիւղ՝ Արտաշիւր անունով (Երևան):

ԲԱԳԱՐԱՆ Ա., Bagaran, հիմնուած 68ին, մայրաքաղաք Բագրատունեաց՝ 885ին:

ԴՈՒԻՆ, Douin, հիմն. 348ին խոսրով Բ. է. կաթողիկոսանիստ մայրաքաղաք՝ մինչև 894 թւին. (Երևան):

ԵԴԵՍՍԻԱ կամ ՈՒՐՅԱ, Edesse, Ourha, հիմն. Ք. Յ. 14 թւին՝ Արգար թագաւորէն. (Միջագետք):

ԼԱՄԲՐՈՆ, Lambron, մայրաքաղաք՝ ի Կիլիկիա. բերդաքաղաք. Նեւրոս Գալէ:

ԿԱՐՍ, Kars, հիմն. 928ին Ախուրեանի ափը, մայրաքաղաք՝ Բագրատունեաց (928-961ին), ապա՝ «Կարուց կառ Վանանդայ րազաւորութեան» (Royaume de Kars ou de Vanande). (961—1071):

ՄՍԻԲԻՆ (Նիսիպիս), Nissibine, հիմն. Ք. Ա. 149ին, Արշակունի թագաւորներէ. մայրաքաղաք՝ մինչև Ք. Յ. 76 թւին. (Միջագետք):

ՍԵՅՍՍԻԱ, Sivas, Արժրունեաց մայրաքաղաք (1021—1070):


ՍԻՍ, Sis, հին. 1186ին Մեծն Լեոն Բ. է, մայրաքաղաք Ռուբինեաց մինչև 1374ին. կաթողիկոսանիստ մինչև այժմ. նշանաոր է տաճարը. (Կիլիկիա):

ՎԱՀԿԱՅ-ԲԵՐԴ, Vahca-Bérde, հին. 1905ին. մայրաքաղաք և ամրոց՝ Ռուբինեանց. (Կիլիկիա):

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ, Vagharchapat, հին. 197ին՝ Վաղարշակ թագաւորէն, Քասաղի ափը, կը կոչուէր ԿԷՍ Արտիմէ (Artimète), Նոր-Քաղաք, Քաղախուղաշ: Մայրաքաղաք՝ մինչև 345 թ. ին. կաթողիկոսանիստ (302—1919), մէջն է Էջմիածին (հին. 452ին) Մայր-Աթոռը՝ Գէորգեան ձեմարանով, Տպարանով, Թանգարանով ևն. (Երևան):

ՎԱՆ, Van, հին. Ք. Ա. 1750ին, Շամիրամէ, ապա Վան թագաւորէն. որրան հայութեան, բազմաթիւ հնութիւններ, բեւեռագիր արձանագրութիւններ. մայրաքաղաք՝ Արժրունեաց. (Վան):

ՏԱՐՍՈՆ, Tarsus, հինուած 1182ին. Ռուբինեանց մայրաքաղաք. բերդաքաղաք և կաթողիկոսանիստ քաղաք. այժմ Թարսուս (Կիլիկիա):



Վանայ բերդը

14. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԵՐԳ-ՍԵՐԱՎԱՔՆԵՐԸ. —

Ափղահակայ բերդ [Ատրպատին.] Քալի
 Զօհաբ
 Ամմիսդա [Կիլիկիա]
 Այծեաց [Տարօն]
 Անարղաբա [Կիլիկիա]
 Անի ամրոց, Կամախ [Տէրախ]
 Անի, մայրաքաղաք [Շիրակ]
 Առիւծ [Կիլիկիա]

Ասկուրէթ [Գուգարք], Աղզոր
 Ասղնբերդ [Տարօն]
 Արկնի, Արղն [Գ. Հայք]
 Արմաւիր [Այրարատ]
 Արտագերս [Այրարատ] կամ կապուտ
 Արտաշատ [Այրարատ]
 Աւնկայ բերդ կամ Օնիկ [Բասեն]
 Բաբերդ [Խաղտիք]

Բաղնոց բերդ [Աղեովետ]
 Բալու [Գ. Հայք]
 Բաղաց քար [Սիւնիք]
 Բարձրբերդ [Կիլիկիա]
 Բջին [Այրարատ]
 Գաղ [Գանձակ] Կհօf
 Գառնի [Սիւնիք]
 Գարդման [Ուտի], Գրքմանիկ
 Գեաաբակ [Գանձակ]
 Դավրէժ [Ատրպտկն.] 253ին հիմն. Մեծն
 Խոսրովէ
 Դարոյնք [Կոզ]
 Դեթրեցիսէ [Չորոփոր] Ազնա-Գայի
 Դուին [Այրարատ]
 Եղեսիա կամ Ուրֆա [Միջագետք]
 Երազդաւորս կամ Շիրակաւան
 Երզնկանք բերդ [Գանձակ]
 Երեւան [Այրարատ]
 Երնջակ [Սիւնիք] Այլնլւա
 Երուանդակերտ [Այրարատ] Ահնա-Քայի
 Երուանդաշատ [Այրարատ] Գարս-Քայի
 Զուռուս բերդ [Վասպուրական]
 Թաւձեան [Տարօն]
 Թի կամ Թիլ [Կիլիկիա]
 Թորթուր [Կրն.]
 Թուխարք, Թուղարս [Տայք]
 Լամբրոն [Կիլիկիա] Կերուս-Գայի
 Լոււի [Այլքսանդրապոլ]
 Լուիքան [Աղբակ]
 Խաչէնի բերդ [Սիւնիք]
 Խարբերդ, Քարբերդ [Ծովք]
 Խնձորեսք [Սիւնիք]
 Խնուսաբերդ [Տուրուբերան]
 Խօխան, Խաւսխան [Արցախ]
 Ծալքա բերդ, Ծաղկաց բերդ [Գուգարք]
 Ծամընդաւ [Փ. Հայք]
 Ծառաքար [Անի]
 Կայեան, Կոյէն Գուգարք]
 Կանչի [Զէյթուն]
 Կապան [Սիւնիք] Դափան
 Կապան [Կիլիկիա]
 Կապոտ բերդ [Այրարատ], Արտազերտ
 Կատուաքար բերդ [Տարօն]
 Կարին, Էրզրուս
 Կարկաւ [Գարգար] Կերկեռ Գայիսի
 Կարս, Ամրոց Կարուց
 Կաքաւաքար [Սիւնիք]
 Կոպետաւ [Կիլիկիա]
 Կոսեկոս [Կիլիկիա]
 Կոսիտաւ [Կիլիկիա]
 Կոտոր [Վասպուրական], Խորուր
 Կուլէթ [Գուգարք]

Հաղամակերտ [Վասպուրական] Պաշ-Քայի
 Հոթերք [Սիւնիք]
 Հալիձոր [Դարաբազ]
 Հայկաբերդ [Վասպուրական]
 Հանդաբերդ [Վայկունիս]
 Հաւսիտաղաց [Արցախ] Սախրդան-Քայիսի
 Հոսովլայ [Աղձնիք] Ռուս-Քայի
 Հրաշկաբերդ կամ Հրատեկայ բերդ [Վա-
 յոց Չոր]
 ձառաբերդ, ձարաբերդ [Դարաբազ] Չը-
 շարեղ
 Մաճնաբերդ [Ուտի]
 Մամրուան [Տայք], Կարիսնա-Քայիսի
 Մանրոտ բերդ կամ Չարեք [Գանձակ]
 Մանձկերտ [Ապահուսնիք]
 Մլուս [Կիլիկիա]
 Մծբին, Կիսիքին [Միջագետք]
 Նոր-Յերդ [Գանձակ]
 Նահկերտ [Այրարատ]
 Նամիրամայ բերդ [Ուտի]
 Նամշուլդէ, Օրբերդ [Գուգարք]
 Նամքոր [Ուտի]
 Շիկուին [Կիլիկիա]
 Շիրակլան, տես Երազդաւորս
 Շիրվան [Մուշ]
 Ողական ամրոց [Տարօն]
 Չարեք, տես Մամրոտ
 Չրշարեղ, ձԱՌԱՅԵՐԻՂ
 Պաղին [Չորոփոր-Հայք], Արղանս
 Պայաղիտ [Այրարատ]
 Պապեոսն [Կիլիկիա]
 Պեհեանի [Փոքր Հայք]
 Պեպու [Կիլիկիա]
 Ջայլամար, Ջլմար [Վան] ձուլամերդ
 Սաին, Սիան-Քայի [Պարսկահայք]
 Սասուն [Աղձնիք]
 Սեւ-Քար [Կարին]
 Սեւաւան [Վասպուրական]
 Սիա [Կիլիկիա]
 Սմբատարբերդ [Բարձր Հայք]
 Սմբատակլայ [Կիլիկիա]
 Վահկայ բերդ [Կիլիկիա]
 Վաղարշակերտ [Այրարատ], Թօփթաֆ-
 Քայի
 Վաղարշաւան [Այրտ.], Բհօյեղիւ-Բհօյիւ
 Վան [Վասպուրական] Վան Քայիսի
 Վարայրավար [Բարձր Հայք]
 Տայլար [Անի]
 Տարսն [Կիլիկիա]
 Տաւուշ [Արցախ], Թաուս Քայի
 Տեմուր [Տայք]
 Տէրունական [Ուտի]

Տիգրանակերտ կամ Ամիդ
 Տմորիս [Կորճայք]
 Տոմիսա [Չորրորդ Հայք]
 Տրդատայ բերդ [Կարին]
 Յամուքաբերդ [Այրարատ]
 Փառխոս [Սիւնիք]

Փերկիտ [Այրարատ]
 Քաշաղէր բերդ [Պարսկահայք]
 Քեղսյոյ Ամրոց [Այրարատ]
 Քեսուն [Կիլիկիա]
 Օձ [Տարօն]
 Օշական [Այրարատ]

15. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆՈՒԱՃՈՒՐՆԵՐԸ. — Բնիկ Հայերը բազմանալով ու տարածուելով Այրարատի, Տարօնի, Վասպուրականի և Սիւնեաց չրջակայ երկիրները՝ իրենց մէջ ձուլեցին դրացի բոլոր միւս ցեղերը: Քաղաքական գորութեան չրջաններուն՝ Հայաստանի սահմաններն աւելի ընդարձակուելով՝ Արեւմտեան Հայոց հետ խառնուեցան նաև Փոքր-Ասիոյ ուրիշ մանր ցեղեր: Անկէ զատ՝ Հայկազանց և Արշակունեաց օրով՝ զանազան ուրիշ ազգեր ալ՝ ըլլա՛յ գերեվարութեամբ, ըլլա՛յ գաղթեցումով՝ եկած ձուլուած են Հայոց մէջ, հիւսիսէն՝ Սկիւթացիք (Scythes) կամ Խազիրք (Hazirs), ձեկնացիք (Genois), Ալաններ (Albanais), Վրացիք (Géorgiens), հարաւէն՝ Մարեր (Mèdes), Քաղդէացիք (Chaldéens), Ասորեստանցիք



Արաւազի գաւաղիմուսը

(Assyriens), հարաւ-արեւմուտքէն՝ Հրեայք (Hebreux), Բանանացիք (Canaanéens), Բուլղարներ (Bulgares), Յոյներ (Grecs), արեւելքէն՝ Պարթեւներ (Parthes), Պահլաւներ (Pahlaves), Արեւորդիներ (Druziens) ևն. : Ամբողջ այս զանգուածային խմորումներուն և երկրին բնական յարմարութիւններուն շնորհիւ՝ Հայաստան երկար ատեն նախանձելի վիճակ ունեցաւ և Արեւելքի ու Արեւմուտքի ճամբուն վրայ քառուղիի իր դեր-

քովը՝ միշտ ալ քաղաքակրթութեան միջնորդն ու փոխանցիչը եղաւ Առաջաւոր Ասիոյ մէջ :

Եւրոպացիներէն սկսեալ չիջման ու տկարացման ճամբուն մէջ մտաւ քրիստոնեայ Հայաստան, և տակաւ քաղաքական աւելի զօրեղ ազգերու ենթարկուելով՝ իր վրայ տիրեցին Պարսիկներ, Յոյներ, Արաբներ, Թաթարներ, Թուրքեր, Կովկասեան լեռնականներ և Ռուսներ : Եւ վերջ ի վերջոյ (1828ին) հայաբնակ բովանդակ երկիրները բաժնուեցան Թուրքաց, Պարսից և Ռուսաց միջև, անջատուելով այսպէս՝ Թուրքահայ, Պարսկահայ ու Ռուսահայ հատուածներու :

16 ՀԱՅ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՆՈՒԻՐԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ. — Հայոց ընդհանուր կաթողիկոսութիւնը հիմնուած ըլլալով Քրիստոսի 35 թուին՝ Ս. Թադէոս և Ս. Բարթոլոմէոս առաքեալներու օրով, իր աթոռներն ունեցեր է յաջորդ սրբար հետեւեալ քաղաքներու մէջ. —

Արտազու Աթոռ	Ք. Յ.	35 թուին	մինչև	300
Վաղարշապատ-Էջմիածին	»	300	—	478
Դուին	»	478	—	931
Աղթամար	»	931	—	967
Արգինոս	»	968	—	992
Անի	»	992	—	1105
Սեւ Լեռ (Կիլիկիա)	»	1105	—	1166
Հոսմկլայ (»)	»	1166	—	1293
Սիս (»)	»	1293	—	1441
Վաղարշապատ-Էջմիածին	»	1441	—	1919

Նրուսադէմի Հայոց Պատրիարքութիւնը՝ հաստատուած 637 թուին՝ Արքեպիսկոպոսութեան տիտղոսով, և 1311ին՝ Պատրիարքութեան տիտղոսին կիրարկումովը, յաջորդաբար ունեցած է մինչև 1909՝ ընդ ամէնը 90ի չափ պատրիարքներ և աթոռակալներ :

Իսկ Կ. Պոլսոյ Հայոց Պատրիարքութիւնը հաստատուած է 1461ին, Պրուսայի Յովակիմ եպիսկոպոսէն սկսելով, և ունեցած է 108ի չափ պատրիարքներ մինչև 1915 թուականը :

17. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՆՔԵՐԸ. — Վանքերը Հայոց մէջ եղած են որքան կրօնական պաշտամունքի տաճարներ, նոյնքան՝ և մանաւանդ հանդիսացած են իրր կրթական-գրական վաւարաններ : Երկար դարեր, հայ Գրական Ոսկեդարէն մինչև Իւրդ դարը (400—1900) հայ վանքերը եղած են նոյն իսկ բացառաբար միակ մշակութային դարբնոցներ, ուրկէ (բաց ի նախաքրիստոնէական շրջանի աննման Գողթան Երզնու շրջանէն) ելած են բազմաթիւ նշանաւոր մատենագիր-աստուածաբան եկեղեցականներ, քրիստոնէական շրջանի և Ոսկեդարու փառաւոր օրերուն մէջ :

Անա վանքերուն գանկը, —

- Ալաման, Ալէմ (Անի), հիմնուած 637ին
Ազրերիկ [Սբ.] (Սասուն), հիմն. Ա. դարուն
Աղթամար (Վան), հիմն. Ժ.րդ դարուն, հոյակապ եկեղեցի
Ամլորդույ վանք (Պիթլիս)
Այրիվանք, տես Գեղարդայ վանք
Անիի 1001 եկեղեցի-վանքերը
Ապարան (Մոկս), հիմն. Ժ.րդ դարուն
Առաքելոց վանք (Մուշ), հիմն. Գ.րդ դարուն
Ավելիու վանք (Պիթլիս)
Արգինա (Անի)
Արուճ (Այրարատ), հիմն. 671ին
Բագնայր (Անի), հիմն. 1010ին, Դոզլիմա
Բջնի (Այրարատ), հիմն. 1031ին
Բարձրահայեաց Ս. Աստուածածին (Տիգրանակերտ), Արկնի
Գայլեձորոյ վանք (Սիւնիք), հիմն. 1200—1400ին
Գանձասար (Արցախ), հիմն. 1000—1815ին
Գեղարդայ կամ Այրիվանք (Այրարատ), հիմն. 300ին
Գիւմպէթ (Կարս)
Գոմոց Ս. Աստուածածին (Պիթլիս)
Դարոյնք (Պայազիտ), հիմն. Է.րդ դարուն
Դպրավանք (Շիրակ), հիմն. Ժ.րդ դարուն
Երնջակ (Սիւնիք), Ալլունա
Էջմիածին (Վաղարշապատ, Երեւան), հիմն. 303ին. Իր շրջափակին մէջ՝
երեք վանք. կաթողիկոսանիւտ, ճեմարան, տպարան, թանգարան.
տես Հայ եկեղեցիի նուիրապետութիւն՝ համար 16.
Ս. Թաիչք (Աերասախ)
Խձկոնք (Անի), հիմն. Ժ.Վ.րդ դարուն, Պեշ-Բիլիսե
Խնդրակատար Աստուածածին (Պիթլիս)
Խորվիրապի Ս. Լուսաւորիչ (Այրարատ)
Խօշավանք (Անի), հիմն. 1038ին
Կապուտիկ (Աերասախ)
[Սբ.] Կարապետ (Մուշ) կամ Խնակնեան վանք, Գլակայ վանք, հիմն.
Գ.րդ դարուն
Կեկառուայ վանք (Երեւան), հիմն. 1032ին
Հաղարծին (Գանձակ), հիմն. Ժ.Բ.րդ դարուն
Հաղրատ (Գուգարք), հիմն. 968ին
Հառճոյ Ուելտ (Շիրակ), Ժ.Բ.րդ դարուն
Հոռոմոսի Վանք, տես Խօշալսնի
Մակարայ վանք (Գանձակ)
Մաղարթայ վանք (Հին Զուղայ), հիմն. Ա. դարուն
Մայրազոմ (Բջնի.Այրարատ)
Մարմ(ար)աչէն (Այրարատ), հիմն. Ժ.րդ դարուն

- Մաքենհաց (Գեղարքունիք), հիմն. 852ին, Քրղղլ-Քիլիսի
 Մեծովրայ վանք (Վան)
 Մեծ-Քար (Կիլիկիա)
 Մրեան (Անի), հիմն. 614ին
 Յուհաննաւանք (Երեւան), հիմն. 300ին
 Նարեկ (Վան), հիմն. Ժ.րդ դարուն. ծննդավայր՝ Նարեկացիի
 Նարեկ (Ակն)
 Շամախու (Ս. Ստեփաննոս) V
 Շողակաթ (Կարին), հիմն. Ա.րդ դարուն
 Շողակայ (Սիւնիք), Վեյի-Աղա, հիմն. Թ.րդ դարուն
 Չաղար Սբ. Նշան (Վան), գերեզման Եղիշէի
 Չանկլը (Կաղզուան)
 Չանկլը (Մուշ), տե՛ս Ս. Կարապետ
 Ջրվըշտիկ (Ղարաբաղ)
 Սանահին (Գուգարք), հիմն. 968ին
 Սեւանայ վանք (Սիւնիք), հիմն. Դ.րդ և նորոգուած՝ Թ.րդ դարուն
 Սեւերիանոս (Սեբաստիա), ծննդավայր՝ Սեւերիանոս զօրավարին
 Սիս (Կիլիկիա), հիմն. 1186ին. կաթողիկոսանիստ
 Սկեւոյ վանք (Կիլիկիա)
 Սոխկերաց վանք (Սեբաստիա), հիմն. 598ին
 Ստաթեւ կամ Տաթեւ (Սիւնիք), հիմն. Թ.րդ դարուն
 Վանավանք (Այրարատ), հիմն. 903ին
 Վարդայ վանք (Վան), հիմն. Դ.րդ դարուն և նորոգուած՝ 981ին.
 Եսի-Քիլիսի. վարժարան, ապարան
 Վարդիկ-Հայր (Այրարատ), հիմն. Է.րդ դարուն
 Տաթեւ, տե՛ս Սսսթեւ
 Տէրէ վանք (Կարին) կամ Աւագ Վանկ, Դառնոյ Վանկ
 Տէր Յուսկան Որդու վանք (Վան)
 Տիկոս, Տեկոս (Անի), հիմն. Զ.րդ դարուն
 Քաղցրահայեաց Աստուածածին (Բալու)

18. ՀԱՅ ՄՍՏԵՆՍԳԻՐՆԵՐԸ. —

- | | |
|----------|---------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|
| Ա. Գ.Ս.Ր | Արտաւազդ Ա., Թագաւոր. Թատերազիր |
| Բ. Գ.Ս.Ր | Ուղիւպ կամ Ոլիմպոս, պատմիչ
Լարուքնա կամ Ղերուքնա, պատմիչ |
| Գ. Գ.Ս.Ր | |
| Դ. Գ.Ս.Ր | Գրիգոր Լուսաւորիչ, Ա. հայրապետ և մատենադիր
Ագաթանգեղոս (Agatange), պատմիչ
Զենոբ-Դլակ, պատմիչ
Փաւստոս-Բիւզանդ, պատմիչ
Մեծն Ներսէս Պարթեւ, շինարար կթղկս. և մատենադիր
Պարոյր Հայկազն (Պրոսերեսիոս), ճարտասան |

	Սահակ Պարթև	} Հայ գիրերու գտնները և նշա- նաւոր մատենագիր (403 — 406)
	Մեսրոպ Մաշտոց	
Ե. ԳՍԲ (Ոսկեդար)	Նզնիկ Կողբացի, իմաստասէր (փիլիսոփայ)	
	Կորիւն, պատմիչ	
	Դաւիթ Անյաղթ, փիլիսոփայ	
	Նզիշէ, պատմիչ	
	Մովսէս Խորենացի, պատմիչ	???
	Մամբրէ Վերձանող, փիլիսոփայ	
	Ղազար Փարպեցի, պատմիչ	
	Դիւտ Կաթողիկոս, մատենագիր	
	Յովհան Մանդակունի, մատենագիր	
Զ. ԳՍԲ	Պետրոս և Աշոտի մեծ իսկոպոսները, մատենագիր	
Է. ԳՍԲ	Կոմիտաս Կաթողիկոս, մատենագիր	
	Յովհ. Մամիկոնեան, պատմիչ	
	Սերէոս Կաթողիկոս, պատմիչ	
	Մովսէս Կաղանկատուացի, պատմիչ	
	Անանիա Շիրակացի, գիտնական-մեթոթկա.	
Ը. ԳՍԲ	Յովհան Իմաստասէր Օձնեցի, փիլիսոփայ	
	Ստեփան Սիւնեցի, փիլիսոփայ	
	Ղեւոնդ Երէց, պատմիչ	
Թ. ԳՍԲ	Մաշտոց Կաթողիկոս, պատմիչ	
	Յովհան » »	
	Թովմա Արծրունի, »	
Ժ. ԳՍԲ	Խոսրով Անձեւացի, մատենագիր	
	Գրիգոր Նարեկացի, նշանաւոր մատենագիր	
	Ստեփաննոս Ասողիկ, պատմիչ	
	Ուխտանէս, պատմիչ	
	Անանիա Նարեկացի, փիլիսոփայ	
ԺԱ. ԳՍԲ	Գրիգոր Մագիստրոս, փիլիսոփայ	
	Արիստակէս Լաստիվերտացի, պատմիչ	
ԺԲ. ԳՍԲ (Յրճարի դար)	Յովհ. Սարկաւազ-վարդապետ, քրոնիկագիր	
	Ներսէս Շնորհալի, մատենագիր	
	Ներսէս Լամբրոնացի, մատենագիր-ճարտասան	
	Մատթէոս Ուռնայեցի, պատմիչ	
	Մխիթար Գօշ, օրէնագիր-մատենագիր	
	Մխիթար Հերացի, բժշկապետ-մատենագիր	
ԺԳ. ԳՍԲ	Սմբատ Սպարապետ, պատմիչ	
	Վանական Վարդապետ, »	
	Վարդան Պատմիչ, »	
	Կիրակոս Գանձակեցի, »	
	Յովհան Երզնկացի (Պրուզ), իմաստասէր-մատենագիր	

ժ.Գ. ԳԱՐ } Ստեփաննոս Օրբէլեան, պատմիչ
 Հեթում Պատմիչ, »
 Մխիթար Այրիվանեցի »
 Յովհան Որոտնեցի, մատենագիր
 Գրիգոր Տաթևացի »
 Խաչատուր Կեչառեցի, ժողովրդին. բանաստեղծ
 Կոստանդին Երզնկացի, » »
 Յովհաննէս » » »

ժ.Ե. ԳԱՐ } Թովմա Մեծոփեցի, պատմիչ
 Առաքել Սիւնեցի, ժ. բանաստեղծ
 Առաքել Բաղիշեցի ժ. »
 Նահապետ Քուչակ, նշանաւոր սիրերգու բանաստեղծ ✓
 Մկրտիչ Նաղաշ, ժ. նշանաւոր բանաստեղծ
 Յովհ. Թլկուրանցի, բանաստեղծ
 Ամիրտովլաթ Ամասիացի, բժշկապետ-մատենագիր

ժ.Զ. ԳԱՐ } Մինաս Թոխաթեցի, առաջին հայ երգիծարան
 Գրիգոր Աղթամարցի, ժ. բանաստեղծ

ժ.Է. ԳԱՐ } Առաքել Դավրիժեցի, պատմիչ
 Արրահամ Կրէտացի, »
 Զաքարիա Քանաքեռցի, »
 Ստեփաննոս Ռոշքեան, »
 Նաղաշ Յովսէփեան, ժ. բանաստեղծ
 Ասար Սեբաստացի, բժշկապետ-մատենագիր
 Բունիաթ Սեբաստացի, բժիշկ-մատենագիր
 Գալուստ Ամասիացի, » »

ժ.Ը. ԳԱՐ } Մխիթար Արբահայր Սեբաստացի, մատենագիր, ռահ-
 վիրայ ժ.Ը. լուգ դարու հայ գրական վերածնուն-
 դին, հիմնադիր «Մխիթարեան» Միաբանութեան
 ժ.Թ. ԳԱՐ } Հ. Միքայէլ Զամչեան, պատմիչ
 (Գրական վերածնունդ) } Հ. Դուկաս Ինճիճեան, մատենագիր
 Հ. Մանուէլ Զախչախեան, »
 Հ. Գարրիէլ Աւետիքեան »
 Յակոբ Նալեան Պատրիարք »
 Գր. Փէշտիմալճեան »
 Գէորգ Դպիր »
 Պաղտասար Դպիր »
 Երեմիա Չէլէպի Բէօմիւրճեան »
 Սայիաթ-Նովա (Յարութիւն) ժ. բանաստեղծ ?

ժԹ. ԳԱՐ

Հ. Մկրտիչ Աւգերեան, մատենագիր
Հ. Եղիա Թովմաճեան, »
Մեսրոպ Թաղիադեանց, »
Կարապետ Վրդ. Շահնազարեանց, մատենագիր
Հ. Արսէն Բազրատունի, մատենագիր-բանաստեղծ
Հ. Եղուարդ Հիւրմիւզ, » »
Հ. Մանուէլ Քաջունի, մատենագիր
Յարութիւն Վրդ. Ալամզարեան, բանաստեղծ
Յովհան Միրզա Վանանդեցի — Վանեցի, ժ. բանաստեղծ
Արապիոն Հէքիմեան, թատերագիր
Հ. Գարրիէլ Այվազովսքի, պատմագիր
Ազբար Աղամ, ժ. բանաստեղծ
Աչըղ Շիրին, ժ. բանաստեղծ

Եւ ուրիշներ . . . :



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՓԱՌՔԸ



Բ. Մ Ա Ս

ԿՈՎԿԱՍԱՀԱՅՔ

19. ՎԱՐՁԱԿԱՆ ԲԱՃԱՆՈՒՄԸ.—1828 և 1829ի (Այրիանուպոլսոյ և Թուրքմէնչայի) և 1878ի (Պերլինի) դաշնագրերովը՝ ռուսական տիրապետութեան տակ անցած են հայկական ութը նահանգներ՝ ամբողջովին կամ մասամբ, ինչպէս. —

- Սիւնիք (Դարայագեաչ, Ղափան, Զանկեղուր, Օրդուպատ):
- Արցախ (Պաշէն, Շամշատիլ, Շուշի):
- Փայտակարան (Բագու, Շիրուան, Թալիշ):
- Ուտի (Գանձակ, Ճւանշիր, Ղարաբաղ, Բէպէրլին):
- Գուգարք (Բոնչալու, Զաւախք, Լօսի, Արտանոն, Արտանուշ):
- Տայք (Օլթի, Ախլցխա, Արղուին):
- Այրարատ (Երեւան, Շարուր, Կարս, Ալեքսանդրոպոլ, Կաղզուան, Մարդարապատ, Սուրմառի):

Վասպուրական (Նախիջևան, Ագուլիս, Օրդուպատ):

Ինչպէս սովորութիւն է՝ ամէն պետութիւն իր զբաւած նոր երկիրներուն աշխարհագրական անունները կը փոխէ, և բնիկ անուններուն տեղ կ'սկսին գործածուիլ նոր տեղանուններ: Այս օրէնքը անխնայ կիրարկուած է Հայաստանի բնիկ ազգային տեղանուններուն հանդէպ, թէ՛ պարսիկ, թէ՛ թուրք և թէ՛ ռուս տէրութիւններէ (տեսնել նետազայցուցակները): Այնպէս որ ներկայիս՝ անճանաչելի դարձած են իսկեւ շինուած ու բնակուած բազմաթիւ քաղաքներու, գիւղերու և վանքերու անունները: Թուենք կարեւորները ռուսական Հայաստանի մէջ. —

20. ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԸ. —

Բնիկ հայ անունները	Այժմու փոխուած անունները	Բնիկ հայ անունները	Այժմու փոխուած անունները
Արագած. լեռ.	Ալախեազ	Բագնայր. վնք.	Ղոզլիձա
Արայի լեռ.	Գառնը-Կարդզ	Գաբեղէնք. գւռ.	Կաղզուան, Կեչուան
Արմաւիր. քղք.	Սարսարապաս I.	Գագ. լեռ.	Կոֆ-սաղ
Արշարունիք. գւռ.	Սինարու P.	Գանձակ. գւռ.	Կեկեճեճ, Լիզապիքո-
Արղուին. քղք.	Լիվանիս, Լագիսասն	Գեղամայ լիճ.	Կոֆեճե-կոլ [պոլ]
Արուճ. գւռ.	Թալիշ	Գողթն. գւռ.	Օրսուպաս
Արցախ. նճնգ.	Ղարապաղ	Երնջակ. բերդ.	Ալրեմա-ֆալիսի
Բագարան. քղք.	Բախու	Երուանդաշատ քղք.	Սանարու երկիր P.

Խաղտիք.	գ.և.՝	Լագիսասն, Արդուին	Շիրակ.	գ.և.՝	Շօրեկեկ
Կարբի.	»	Պասար, Բասար P.	Շիրուան.	»	Բախու
Կանգարք.	»	Բամպակի, Ալեխնդ-	Ուխտեաց-երկիր		Օլլի
Կուժրի	քղք.	Ալեխանդրոպոլ [Բաղ.]	Պարտիզաց փոք		Օլլի
Կղարջք.	գ.և.՝	Կլարձեքի, Արսանոյշ	Ջալախք.	գ.և.՝	Ջրջր
Կապան.	»	Դաշիան	Ջուղա.	քղք.	ձուլֆա P.
Կող.	»	Կեօյե, Պոնչալու	Սեւանայ լիճ		Կոֆձե-կեօլ
Կողք.	գիւղ	Կուլի, Գուլի	Վանանդ.	գ.և.՝	Սողանլու (Կարս)
Կողթ.	գ.և.՝	Շամշասիլ P.	Վայոց ձոր		Դարայագեւագ
Կոտայք.	»	Սահարափոս, Ջան- գիպասար P.	Վարաժնունիք.գ.և.՝		Դարայիյակ
Հաբանդ.	գ.և.՝	Ջանգեգոր P.	Տայք.	գ.և.՝	Օլլի
Հրաղբան.	գետ	Ջեղի-լայ P.	Տամբուր.	»	Արդուին, Լագիսասն
ձակատք.	գ.և.՝	Սիւրմեկի	Տաշիքք.	»	Լոնի
ձառաբերդ.		Ջրլաբերդ	Տաուշ.	բերդ	Թառուս-ֆայե P.
			Օրկով.	լեռ	Օրկով

Եւ չմոռնանք որ, բնիկ հայ-աղագային անունները՝ տեղագրական ստուգաբանութեանը համաձայն իրենց որոշ նշանակութիւններն ունին, մինչդեռ փոխուածները՝ յաճախ բռնազրօսիկ փխմար նմանաձայնութեամբ (onomatopée) չըջումներ են բնիկ կոչումներուն :

Տեսնել նաև Թուրքահայ ու Պարսկահայ բաժինները :

ՅԷ. ԿՈՎԿԱՍՍԱՆԻՆԻ ԹԻՎԸ. — Ռուսական վարչային բաժանումներովը՝ ընդ ամէն 10 նահանգներէ բաղկացած և 473,000 քառ. քիլոմէթր տարածութիւն ունեցող Անդրկովկասի այլազան բնակչութեան թիւը 1897ին՝ 9,290,000 էր [«Լոյս» Տարեցոյց 1904, քաղուած՝ ռուսական երկու պաշտօնական հրատարակութիւններէ] : Ասոնցմէ Հայոց թիւը կ'հաշուուի 1,128,973, ըստ հետեւեալ ցուցակին .—

Ա. ՅՈՒՅՍԿ

Տարի	Նահանգ	Բնակչաց թիւ	Հայոց թիւ	Հայերը %
1897	Երեւանի	829,550	433,682	52.2 %
	Գանձակի	878,185	293,632	33.4 %
	Թիֆլիսի	1,054,250	221,033	21 %
	Կարսի	250,645	72,967	25.1 %
	Բագուի	826,806	50,550	06.1 %
	Քութայիսի	1,057,243	21,107	01.9 %
	Դաղըստանի	571,381	941	00.2 %
	Սեւ. ծովեան	57,478	6,226	10.8 %
	Հիւս. Կովկասի	3,725,543	28,835	02.5 %
		Ընդ ամէն	9,291,081	1,128,973

Բ. ՅՈՒՑԱԿ. — 1907ին, միեւնոյն պաշտօնական վիճակագրութեանց համաձայն, Հայերու թիւն անձած է հետեւեալ համեմատութեամբ. — [«Լոյս» 1908]:

Տարի	Նախանգ	Հայոց թիւը	1897 — 1907՝ Հայոց թիւը	ուելցած են Հայ
1907	Երեւանի	510,975	433,682	77,293
	Գանձակի	309,858	293,632	16,226
	Թիֆլիսի	265,985	221,033	44,952
	Կարսի	92,497	72,967	19,530
	Բազումի	88,520	50,550	37,970
	Քութայիսի	— 3,824	21,107	—
	Դաղքաստանի	3,066	941	2,125
	Սեւ ծովեան	7,689	6,226	1,463
	Բաթումի	27,670	28,835	1,135
	Չաքաթալայի	2,500		
				200,894
				Բթս. — 17,283
	Համագումար	1,312,584	1,128,973	183,611

Գ. ՅՈՒՑԱԿ. — 1901ին և 1911ին միմիայն թիֆլիս քաղաքի բնակչութիւնը, ըստ վիճակագրութեանց՝ հետեւեալ համեմատութիւնը կ'ցուցնէ. [«Լոյս» 1904. «Ամեն. Տրց.» 1912՝ պաշտօնական տղրիւրներէ]. —

Տարի	1901ին թիֆլիսի բնակչութիւնը	1911ին թիֆլիսի բնկչթ.	0/0
1901	Հայ 63,243 անձ (34,425 արու.)	Հայ 124,901 անձ	Հայ 40 0/0
	Վրացի 50,908 » (31,686 »)	Վրացի 54,120 »	—
	Ռուս 41,934 » (23,298 »)	Ռուս 67,086 »	—
1911	Զնգնք. 30,568 » —	Զնգնք. 59,100 »	—
	Հմգմ. 186,653 »	Հմգմր. 305,207 »	—

Դ. ՅՈՒՑԱԿ. — Հայերը բացարձակ մեծամասնութիւն կը կազմեն հետեւեալ գաւառներու մէջ. [«Լոյս» 1908, էջ 256. պշտկն.]

Տարի	Գաւառ	Հայոց թիւը	Ծանօթութիւնք
1907	էջմիածին	86,069	1907ի պաշտօնական վիճակագրութեամբ տե՛ս Բ. ցուցակը՝ Անդրկովկասի 10 նահանգներուն մէջ Հայոց թիւն է 1,312,584 անձ. նախորդ տասնամեակի թիւին վրայ ունեցած է 183,611 հայ անձի աճում մը:
	Ալեքսանդրօպօլ	135,004	
	Նոր Բայազետ	82,815	
	Կարս	31,375	
	Կաղզուան	24,391	
	Ախալքալաք	56,512	
	Բօրչալու	47,053	
	Շուշի	59,231	
	Զանգեզուր	77,986	
Ղազախ	44,411	1912ի սկիզբը ուսու կառավարութեան կազմած վիճակագրութեան համաձայն [«Ամեն. Տրցց.» 1914 էջ 323]՝ Անդրկովկասի Հայոց թիւը բարձրացած է 1,636,486ի: Ուրեմս 4 տարուան մէջ ունեցած է 323,902 անձի յաւելում մը:	

Այս վիճակագրութեան վրայ աւելցնելու ենք երկու նոր թիւեր, Ա.՝ 1912էն մինչեւ 1915ի սկիզբը՝ Անդրկովկասի Հայոց եռամեայ աճուժը, միջին հաշուով 250,000 անձ. և Բ.՝ 1917ին Վասպուրականի և Կարնոյ Հայոց գաղթումովը դոյացած յաւելումը՝ զիցուք 400,000 անձ: Այն ատեն կ'ունենանք հետեւեալ թիւը. —

Ե. ՅՈՒՅԱԿ. — Անդրկովկասի Հայոց աճումն ու թիւը. —

Ցարի	ՊԵՏԿԵՆ՝ Հայոց թիւը	Ա.նաձ	Ներկայ թիւը
1860	540,000	—	—
1887	870,000	—	—
1897	1,128,973	588,973 անձ	—
1907	1,312,584	183,611 »	—
1912	1,636,486+	323,902 »	1,636,486 հայ
1915	—	աճած՝ 250,000 »	} = +650,000
1915	—	գղթծ. 400,000 »	
1919	—	—	

Ուրեմն ներկայ տարւան (1919) մէջ՝ Անդրկովկասի Հայոց մտաւոր թիւն է 2,280,000, որուն վրայ աւելցնելով Ռուսաստանի միւս վայրերու մէջ ցրուած Հայոց թիւը, միջին հաշուով 250,000 — 300,000, այն ատեն համայն Ռուսիոյ մէջ գտնուող Հայոց թիւը կ'ըլլայ երկուսուկես միլիոնէն ոչ պակաս, նոյն իսկ երեք միլիոնի մօտիկ: [Նոյնիւ Երցց. 1887]:

22. ԿՈՎԿԱՍԱՍՏԱՆԻ ԵՎ ԵՂԵՅՍԱՆԻ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ. — Հայ ազգային Լուսաւորչական եկեղեցու ազատ նուիրապետութեան օրէնքներուն համաձայն, ժողովրդի ընդհանուր քուէներովը ընտրուած Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոսը կը նստի Ս. Էջմիածին (Վաղարշապատ) և կ'նստուէ թովանդակ Հայ Ազգը, աշխարհի ո՛ր կողմն ալ ցրուած ըլլայ: Իր գերագոյն իրաւասութեան տակն են Սիսի (Կիլիկիա) և Աղթամարի (Վան) կաթողիկոսութիւնները, և երուսաղէմի ու Կ. Պոլսոյ Պատրիարքութիւնները, ինչպէս նաև Պարսկա-Հնդկաստանի, Եւրոպայի, Եգիպտոսի և Ամերիկայի Հայոց հոգեւոր չրջուն հովիւները: (Տեսնել Մայր-Աթոռի Կաթողիկոսներու ցանկը՝ համար 16):

Կովկասահայոց հոգեւոր վարչութիւնը բաժնուած է հետեւեալ թեմակալ Առաջնորդութեանց և Փոխանորդութեանց. [«Լոյս» 1904, «Ընդարձակ Օրացոյց» 1909, Օրացոյց 1887]:

ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ-ԱԹՈՒ. Հայրապետութիւն Ամենայն Հայոց, հիմն. 301ին Ս. Գր. Լուսաւորչէն:

Ա. Երեւանի Թեմակալ-Առաջնորդութիւն թիւ 500

1. — Ալեքսանդրօպօլի Առաջնորդութիւն.
2. — Տաթևի » »
3. — Կարսի » »
4. — Հին-Նախիջևանի » »

Բ. Վրասանի և Իմերեթի Թեմակալ-Առաջնորդութիւն. Թեմ 305

- 1. — Թիֆլիզի Առաջնորդին .-Փոխանորդին .
- 2. — Գորիի » »
- 3. — Ախլցխայի » »
- 4. — Գանձակի » »

Գ. Ղարաբաղի Թեմակալ-Առաջնորդութիւն. Թեմ 135

- 1. — Շուշիի Առաջնորդին .-Փոխանորդին .
- 2. — Նուխիի » »

Դ. Շամախիի Թեմակալ-Առաջնորդութիւն. Թեմ 45

- 1. — Շամախիի Առաջնորդութիւն
- 2. — Բազուի Գործակալութիւն

Ե. Ասրախանի Առաջնորդն. (Աստրախան և Ղզլար) Թեմ 18

Զ. Բեսարաբիայի Առաջնորդն. (Բեսարաբիա, Նոր-Նախիջեան, Պեհերուբզ, Մոսկովա) Թեմ 25

Է. Ասրայասականի Առաջնորդն. (Ատրպատական, Սալմաստ, Համադան) Թեմ 47

Ը. Պարսկանդկասանի Առաջնորդն. (Սպահան, Թէհրան, Կալկաթա, Մատրաս, Պոմպէյ, Պաթախա, Ռանկուն, Սինկափուր, Մանտայէ և չն.) Թեմ 16

Համագումար՝ Թեմ 1091

(Կովկասի հայ-կաթոլիկները, Սարաթովի կաթոլիկ եպիսկոպոսին իրաւասութեան տակ, ունին հոգեւոր վիճակներ՝ Կովկասի և Անդրկովկասի հայաշատ կեդրոններու մէջ, Արդուին, Ախլցխա, Թիֆլիս ևն.:

Հայ-Բողոքականները, Մոսկուայի Աւետարանական Ժողովին (կոնսիստորիաի) իրաւասութեան տակ են, և ունին նոյնպէս ժողովարաններ Կովկասի և Անդրկովկասի կարգ մը քաղաքներու մէջ):

Հայ եկեղեցական ինքնօրէն և ընդարձակ վարչութիւնը՝ իր թեմերուն մէջ ունի եկեղեցա-աղագապական հարուստ հոգի, կալուածներ, վանքեր, եկեղեցիներ (ինչպէս՝ Էջմիածնի՝ հիմնած. 303ին, Սեւանայ՝ հիմն. Գ. րդ դարուն, Տարեւի՝ հիմն. 895ին, Հաղբասի և Սանահնի՝ հիմն. 968ին, և չն. նշանաւոր վանքերը), և Հոգեւոր Թեմական-Գարանոցներ (ինչպէս՝ Էջմիածնի Գորդեան՝ հիմն.՝ 1874ին, և Թիֆլիզի Ներսիսեան՝ հիմն. 1824ին և չն. ճեմարանները):

Այդ կալուածներուն եկամուտներովը և ժողովրդի նուէրներովը կ'անտեսուին եկեղեցական ու կրթական պէտքերը ըստ հետեւեալ ցուցակներուն. —

Զ. ՑՈՒՑԱԿ.— Եկեղեցական տնտեսութիւնը. [«Առյս» 1908. էջ 178—180. պաշտօնական]. —

Տարի	Թեմ	Կողմն.	Վանք	Եկեղեցի	Պրամագուլիս Բուրլի
1907	Երեւանի	788	47	643	243,830
	Վրաստան-Իմէրէթի	399	14	356	287,105
	Ղարաբաղի	281	13	208	45,664
	Շամախիի	49	2	38	101,388
		*1,517	*76	*1,245	*677,987
	Աստրախանի	104	—	39	504,456
	Բեսարաբիոյ, Ն.-Նիսջ.	99	3	43	350,990
		*203	*3	*82	*851,446
	Վերէն	1,517	76	1,245	677,987
	Համագումարը	1720	79	1327	1,529,433

Է. ՑՈՒՑԱԿ.— Հայ եկեղեցական-վանական կալուածները՝ կողմասի մէջ կ'ներկայացնեն հետեւեալ համեմատութիւնները՝ տարածութեան և հասոյթի կողմէ. [«Առյս» 1908. էջ 200—202. պաշտօնական]. —

Տարի	Թեմ	Եկղցակն. հողի տարածութիւն	Զուտ հասոյթ՝ օրկն.
1907	Էջմծ.ի Մայր-Աթոռի	45,000 Դեսիադին	48,000 Բուրլի
	» » »	— Անշտ. կալ.	50,301 »
	Շամախիի	79 Դեսիադին	1,810 »
	Ղարաբաղի	58,698 » (*)	2,992 »
	Երեւանի	32,440 »	16,484 »
	Վրաստանի-Իմէրէթի	12,250 »	3,080 »
		*148,467 Դէսիադին	*122,667 Բուրլի
	Բեսարաբիոյ, Ն.-Նիսջ.	4,418 Դէսիադին	13,020 Բուրլի
	Աստրախանի	60 »	150 »
		*4,478 Դէսիադին	*13,170 Բուրլի
Համագումարը	148,467 »	122,667 »	
	152,945 Դէսիադին	135,837 Բուրլի	

Այս եկեղեցական կալուածներն ու հողերը կա՛մ եկեղեցի-վանքերուն սեփականութիւնն են, կա՛մ մասնաւոր կտակներով անոնց յատկացուած գոյք են. [«Կողմասեան Վէրքեր» Ակնունի՝ 50]: Յատկապէս Ախալցխայի Հայ Լուսաւորչական Ս. Փրկիչ եկեղեցու սեփականութիւն են 19,000 դէսիադին տարածութեամբ հողեր՝ Թիֆլիսի և Ախալքալաքի

(*) Մէկ Դէսիադին՝ = 96 մէթր.

գաւառին մէջ [Անդ՝ 53]: Կարսի, Բաթումի և Ալեքսանդրապոլի հայապատկան եկեղեցական հողերուն տարածութիւնը կ'հաշուելի մօտ 30,000 դէսրադին:

Տեսնել նաև Հայաստանի վանքերը՝ համար 17:

ՔՅ. ԿՈՎԿԱՍՍԱՆԻ ԿՐԹԱԿԱՆ ՎԵՃԱԿԸ. — Երկրի մ'ազգարնակութեան թիւը չէ որ դեր կ'խաղայ այլ որակը: Ասիկա ճիշտ է մանաւանդ Անդրկովկասի ժողովուրդներուն համար, ուր՝ չնայելով թէ ընդհանուր բնակչութեան $\frac{1}{10}$ ը կը կազմեն Հայերը, բայց մշակութապէս ամէնէն բարձր տեղը կ'զբաւեն՝ թէ՛ դպրոցներու, թէ՛ մամուլի և գրականութեան, թէ՛ բարեգործական ընկերութիւններու, թէ՛ թատրոնի կողմէ:

Հակառակ այն խտուրթիւններուն որ ուսուցանողութիւնն ի գործ դրաւ 1897ին, և հրամայեց փակել 320 հայ վարժարաններ, անոնք հաստատուած ըլլալով մասնաւոր կտակներով, և եկեղեցական-ձխական միջոցներով մատակարարուելով՝ կ'ներկայացնեն ամբողջ Անդրկովկասի 10 նահանգներուն մէջ՝ (6) վեց թեմական Գպրանոց (Séminaire) և աւելի քան 100 ուսումնարանական-նախակրթական դպրոցներ, ծխական կամ մասնաւոր, ինչպէս. —

Ը. ՅՈՒՅՍԱ. — Կովկասի հայ վարժարաններուն և անոնց ուսանողութեան ուսուցչութեան վիճակագրութիւնը. —

Տարի	Թեմ	Հայ դպրոցներուն թիւը	Ուսանող եւ Ուսուցիչ	Տարեկան եկամուտը
1889	Թիֆլիզի	44	11,359 ուսնդ. 482 ուսցլ.	212,554 ռրլ.
	Երեւանի	30		
	Ղարաբաղի	17		
	Շամախիի	14		
	Աստրախանի	18	—	?
	Ամբողջը	123		

Թ. ՅՈՒՅՍԱ. — Կովկասի 6 թեմական Գպրանոցները.

Տարի վճկգր.	Թեմական Գպրանոցը	Հիմնուած քուական	Ուսանող	Ուսցլ.	Գրդրնի գիրքերուն քիւլը	Պիւսնի քրլ.
1902 } 1908 }	Թիֆլիզի «Ներսիսեան»	1824ին	620 և 597 միջև	608 24	4745	75228
1908	Երևանի «Թմկն. Գպրնց.»	1837ին	—	460 20
1902	Էջմիածնի «Գէորգեան»	1874ին	—	251 15 (?)	գրքր՝ + 2500 սպւծ՝ + 30000
1902	Շուշիի (Ղրբղ. Արցխի)	1879ին	—	584 18 (?)	4271
1908	Նոր-Նախիջեւանի	1879ին	—	289 17
....	Աստրխանի կամ Շմխիի	1860ին	—

Ժ. ՅՈՒՅՍԿ. — Կովկասի ընդհանուր դպրոցներուն մէջ՝ հայ ուսանողները կ'ներկայացնեն հետեւեալ համեմատութիւնը («Լոյս» 1904, պշտնկն.)

Տարի	Միջնակարգ դպրոցներու մէջ	Նախակրթարաններու մէջ	Մասնաւոր կամ Տար. դպրոցաց մէջ
1903	Հայերը՝ *5,983 կմ. 24 $\frac{1}{4}$ %	*4,521 կմ. 25.5%	*26,020 կամ 16.6%
	Ռուս՝ 11,412 » 46.6%	6,289 » 35.5%	82,098 » 52.4%
	Վրացի՝ 3,464 » 14.2%	4,386 » 24.8%	29,140 » 18.6%
	Ուրիշ ցեղ՝ 3,611 » 14.7%	2,526 » 14.2%	19,699 » 12.4%
	Ընդամենը՝ 24,470 — 100%	17,722 — 100%	156,957 — 100%

24. ԿՈՎԿԱՍՍԱՆԻ ԳՐԱՆԱՆՈՒԹԻՒՆԸ, ՄԱՍՏՈՒԼԸ ԵՒՆ. (Տպարանները, Գրադարանները, Ընկերութիւնները, Թատրոնը, Արհեստն ու Վաճառականութիւնը). —

Ժժ.րդ դարու վերջին քառորդին, ռուսական տիրապետութեան հաւանասարար ազգս պայմաններուն մէջ՝ Անդրկովկասի և ընդհանրապէս Ռուսաստանի Հայութիւնը, անտեսապէս ու կրթապէս բարգաւաճելով, ունեցաւ նաև իր ուրոյն Գրականութիւնը: Խուճար մը լուսաւորեալ երիտասարդներ, Խաչատուր Աբովեան, Ստեփաննոս Նաղարեան, Միք. Նալբանդեան, Ռաֆայէլ Պատկանեան (Գամառ-Քաթիպա) և Սմբատ Շահաղիզ, առաջնորդն ու ղեկավարը դարձան Ռուսահայ Աշխարհարարին:

Քաղաքական և քաղաքակրթական նպաստաւոր պայմաններու մէջ — յիսուն տարւան համեմատարար կարճ շրջանի մ'ընթացքին — ռուսական Հայաստանի հայ գրականութիւնը մեծ թոխչ առաւ, և գրական վառարաններ հանդիսացան Պետրբուրգ, Մոսկուա, Թիֆլիս, Շուշի, Ալեքսանդրապոլ, Էջմիածին, Բագու ևն., ու տուին հետեւեալ գրական կարեւոր դէմքեր, — բանաստեղծ, վիպասան, պատմագիր, բանասէր, ազգագիր, օրագրող-հրապարակագիր, թատերագիր, հասարակական գործիչ ևն. —

Ա. Գ Ր Ա Գ Է Տ Ն Ե Ր Ը

- Աբգար Յովնանեկեանց (184. —) հրապարակագիր
- Ալեքսանդր Երիցեան (1842—1902) պատմաբան, հրապարակագիր
- Ալեքսանդր Քալանթար (1855—1918) հրապարակագիր, գործիչ
- Ալեքսանդր Ծատուրեան (1870—1918) բանաստեղծ
- Ակնունի [Խչար. Մալումեան] (187.— 1915) հասարակական գործիչ, գրագէտ, հրապարակագիր
- Աբրղ-Ջիւանի [Լեւոնեանց] (185.—) ժողովրդային բնաս., հազներգու
- Ասրպէտ [Մարգրիտ Մըհիբեան.] (1850) վիպասան
- Աւետիք Ահարոնեան (1866) վիպասան, թատերագիր, գործիչ
- Աւետիք Արախանեան (1857—1912) հրապարակագիր
- Աւետիք Իսահակեան (1875) բանաստեղծ
- Գաբրիէլ Պատկանեան (1802—1889) բանաստեղծ

- Գաբրիել Սունդուկեանց (1825 - 1912) *Թատերագիր*
Գալուստ Տեր Մկրտչեան (186.) *բանասէր*
Գաբեգիմ Վրդ. Յովսէփեան (186.) *բանասէր*
Գաբեգիմ Լեւոնեան (187.) *հրապարակագիր*
Գիւս Քննյ. Աղանեանց (185.) *բանասէր*
Գրիգոր Արծրունի (1845—1892) *հրապարակագիր, գործիչ-ղեկավար*
ՓրօՅ. Գրիգոր Խալաբեանց (1847—1902) *բանասէր, պատմ., մանկ.*
Դեբենիկ Տեմիրեան (188.) *բանաստեղծ*
Նրուանդ Լալայեան (186.) *աղագիր*
ՓրօՅ. Թորոս Թորոմանեան (186.) *ճարտարագէտ*
Լեւոն Մանուկեան (1864) *բանաստեղծ*
Լեւոն Սեղբոսեան [Շանր] (1869) *բանաստեղծ*
Լեօ, Առաքել Բաբախանեան (1860) *պատմագիր, վիպասան*
Խաչատուր Աբովեան (1804—1848) *վիպասան-բանաստեղծ, (հիմնադիր՝
Արեւելահայ Աշխարհարարին)*
Խորէն Նպակ. Սեփանէ (1840—1900) *բանասէր*
Կամիսաս Վարդապետ (1869) *երաժիշտ-երգահան*
Կ. Կոստանեանց (185.) *բանասէր*
Համբարձում Առաքելեան (186.—1918) *հրապարակագիր, գործիչ*
Հրաչեայ Անտեան (187.) *լեզուագէտ, բանաստեղծ*
Ղազարոս Աղայեան (1840—1912) *բանաստեղծ, վիպասան*
Մանուկ Աբեղեան (186.) *աղագիր, բանաստեղծ*
Միք. Յովնանէսեան Նար-Դոս, *վիպասան, հրապարակագիր*
Միք. Նալբանդեան (1830—1867) *հրապարակագիր, բանաստեղծ, Արեւելահայ Աշխարհարարին ռահիրաներէն մէկը*
Միք. Վարանդեան (186.) *հասարակական գործիչ, հրապարակագիր*
Մկրտիչ Էմին (1815—1890) *(բանաստեղծ), պատմագէտ, (հիմնադիր)*
Մուրացան [Գր. Տ. Յովհաննէսեան] (1854—1908) *Թարգմ., վիպասան*
Յակոբ Յակոբեան (1869) *բանաստեղծ*
Յովհ. Թումանեան (1869) *բանաստեղծ*
Յովհ. Յովհաննիսեան (1864) *բանաստեղծ*
Շիրվանզադէ [Ալեքս. Մովս.] (1857) *Թատերագիր, վիպասան*
Տկն. Շուշանիկ Կուրդինեան (1876) *բանաստեղծ*
Պերն Պոսեան (1837—1907) *վիպագիր*
Ռափայել Պաշկանեան [Գամառ-Քաթիպա] (1830—1892) *բանաստեղծ*
Սմբատ Շահագիզ (1840—1907) *բանաստեղծ*
Սալահիգիլեան (186.) *հասարակական գործիչ, հրապարակագիր*
Սեփանոս Նազարեանց (1810—1879) *հրապարակագիր (Ռուսահայ Աշխարհարարին հիմնադիրներէն մէկը)*
Սեփանոս Մալխասեանց (186.) *բանասէր*
Սեփանոս Պալասանեան (1837—1889) *պատմագիր*
Վահան Միրազեան (187.) *բանաստեղծ*
Վահան Տերեան (188.) *բանաստեղծ*

Վրբանես Փափազեան (1866) վիպասան, թատերագիր
 ԲաճՅի [Յկբ. Մէլիք-Յակոբեան] (1835—1888) վիպագիր (Ռուսահայ
 Աշխարհարարին յղկիչներէն մէկը)
 Քերովբէ Պասկանեան (1833—1889) բանաստեղծ
 Եւ բաղմաթիւ ուրիշներ:
 Հայ պետական անձերն ու արուեստագէտները՝ տես Ե. ՄԱՍ
 համար 46 և 47:

Բ. ՄԱՄՈՒԼՈՒ. — Մամուլն ալ այս գրադէտներուն և իրենց գործա-
 կիցներուն ջանքերովը մեծ թուիչ առած է կովկասի Հայոց մէջ: 1846ին
 հրատարակուած բլլալով «կովկաս» անունով անդրանիկ ռուսահայ շաբա-
 թաթերթը, իրեն հետեւեցան ուրիշներ: Ահա անոնց ցանկը այբենական
 կարգով. —

- | | |
|----------------------------------------------------------|-------------------------------|
| Ազգագրական Հանդէս (Թիֆլ. 1896) | Հայկական Աշխարհ (Թիֆլիզ 1866) |
| Ալիք (Թիֆլիզ 1906) | Հայկական Աշխարհ (Շուշի 1870) |
| Աղբիւր-Տարազ (Թիֆլիզ 1873) | Հասկեր (Թիֆլիզ 1905) |
| Անկախ Մամուլ (Թիֆլիզ 1907) | Հովիւ (Թիֆլիզ —) |
| Աշխատանք (Թիֆլիզ 1906) | Հորիզոն (Թիֆլիզ 1906) |
| Առողջապահիկ թերթ (Թիֆլիզ) | Հիւսիսափայլ (Մոսկվա 1858) |
| Ապագայ (Թիֆլիզ 1907) | Ճոռքալ (1859) |
| Արարատ (Թիֆլիզ 1850) | Մասեաց Աղաւնի (Թիֆլիզ 1855) |
| Արարատ (Էջմիածին 1867) | Մեղու (Թիֆլիզ 1857) |
| Արաքս (Պետերբուրգ 1887—1898) | Մեղու Հայաստանի (Թիֆլ. 1858) |
| Արձագանք (Թիֆլիզ 1882 - 1898) | Մշակ (Թիֆլիզ 1872) |
| Արօր (Թիֆլիզ 1907) | Մուրճ (Թիֆլիզ 1889—1907) |
| Բանբեր (Պետերբուրգ 1903) | Յառաջ (Թիֆլիզ 1906) |
| Գեղարուեստ (Թիֆլիզ 1908) | Յոյս (Թիֆլիզ 1906) |
| Գիւղասանտես (Թիֆլիզ 1907) | Յուշարար (Թիֆլիզ 1907) |
| Գրականութիւն և կեանք (Թիֆլ. 1909) | Նոր Դար (Թիֆլիզ 1884) |
| Երկիր (Թիֆլիզ 1907) | Նոր կեանք (Նոր Նախիջևան 1890) |
| Զանգ (Թիֆլիզ 1907) | Նոր Դպրոց (Թիֆլիզ 1911) |
| Թատրոն (Թիֆլիզ 1893) | Նոր Խօսք (Թիֆլիզ 1907) |
| Ժայռ (Թիֆլիզ 1906) | Շաւիղ (Թիֆլիզ 1906) |
| Ժամանակ (Թիֆլիզ 1907) | Պայքար (Թիֆլիզ 1907) |
| Հուսայ (Թիֆլիզ —) | Վասակ (Թիֆլիզ 1907) |
| Խաղաբալա (Թիֆլիզ —) | Տարազ (Թիֆլիզ 1889) |
| Խարիսխ (Թիֆլիզ 1907) | Փայլակ (Թիֆլիզ 1907) |
| Կայծ (Թիֆլիզ 1907) | Փարոս Հայաստանի (Մոսկվա 1879) |
| Կովկասի Առաւօտ (Թիֆլիզ 1906) | Փարոս (Պաքու 1910) |
| ԿՈՎԿԱՍ [անդրանիկ ռուսահայ շա-
բաթաթերթ] (Թիֆլիզ 1846) | Փորձ (Թիֆլիս 1875) |
| Կռունկ Հայոց Աշխհի (Թիֆլ. 1860—64) | |

Եւն. ևն. ևն.

Գ. ՏՊԱՐԱՆՆԵՐԸ.— Մամուլի գործունէութեանն օգնած են ընականաբար Տպարանները, որք հիմնուած են Ռուսահայոց իրենց սեփական միջոցներով՝ Կովկասի կարեւոր կեդրոններուն մէջ. ինչպէս Էջմիածին (1765ին), Երևան, Թիֆլիզ, Շուշի, Կարս, Ալեքսանդրօպօլ, Բագու, Շամախի, Գանձակ, Ռոստով, Նոր Նախիջեան, Աստրախան, Թէոդոսիա, Մոսկուա, Պետերբուրգ ևն., ևն.:

Գ. ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐԸ.— Համընթացաբար Մամուլին արտադրութեանցը՝ բողոքուած են Գրադարան-Ընթերցարաններ՝ գրէթէ բոլոր հայաբնակ քաղաքներու մէջ: Ախալքալաքի պէս փոքրիկ քաղաքի մը Հայոց գրադարանը 1,500 օրինակ գիրք կ'հաշուէ: Ամէնէն կարեւորներէն են Էջմիածնի, Թիֆլիզի Հայոց Բարեգործական Ընկ.ի, Մոսկուայի Լազարեան Ճեմարանի ճոխ մատենադարանները: Անհատական հարուստ հայ մատենադարաններ չափ ու չափ են թէ՛ Կովկասի մէջ, թէ՛ այլուր:


Ե. ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԵՒ ԱՅԼ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ.— Կովկասի Հայութիւնն ունեցած է և ունի բազմաթիւ գիտական, կրթական, գրական և բարեգործական ընկերութիւններ, ինչպէս.—

- «Բագուի Հայոց Մարդասիրական Ընկ.» հիմնուած 1863ին.
 - «Թիֆլիզի Հայոց Հրատարակչական Ընկ.» » 1881ին.
 - «Հայուհեաց Բարեգործկն. Ընկ.» Թիֆլիս » 1881ին.
 - «Կովկասեան Հայոց Բրդրակն. Ընկ.» » » 1881ին, որը
20է աւելի մասնաճիւղեր ունի Անդրկովկասի զանազան
հայաբնակ կեդրոններու մէջ:
 - «Հայոց Ազգագրական Ընկ.» Թիֆլիս հիմնուած 1900ին.
 - «Գիւղատնտեսական Ընկ.» » » —
 - «Ուսուցիչ. և Ուսուցչուհիներու Ընկ.» Թիֆլիս » —
- Նաև Հնչակեան Կուսակցութիւն (1888ին) և Հայ. Յեղ. Դաշնակցութիւն (1890ին):

Ամբողջ Ռուսոյ Հայերը՝ ունին նաև 3 Անկերպանց:

Զ. ԹԱՏՐՈՆԸ.— Թատերական գործը մեծ զարկ ստացած է Կովկասի Հայոց մէջ: Մասնաւոր ու պետական թատրոններու մէջ հայերէն լեզուով և հայ կեանքէ բնօրէն խաղացուելէ զատ՝ գրեթէ ամէն հայ դրպարոց ունի իր տարեկան ներկայացումները՝ դպրոցի օգտին: Հայ նշանաւոր դերասան և դերասանուհիներ խաղցած են Կովկասի հայ և օտար բեմերուն վրայ, ինչպէս՝ Արէլեան, Ջարիֆեան, Ադամեան, Գալֆայեան, Ալիբանեան, Տէր. Սիրանոյշ, Տէր. Դուրեան-Արմէնեան, ևն. ևն.: Կովկասահայ ծանօթ բեմագիրներ եղած են՝ Սուրուկեանց, Շիրվանզադէ, Մուրացան, Ահարոնեան, Մանուէլեան, Փափազեան, Սեղբոսեան (Շանթ):

Է. ԱՐՀԵՍՏՆԵՐՆ ՈՒ ՎԱՃԱՌԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ.— Կովկասի մէջ, թէ՛ գլխաւոր քաղաքներու և թէ՛ գիւղաքաղաքներու մէջ, Արհեստները (սովորելիւն, կրթութեան գործութիւն, կանաչգործութիւն, դերձակութիւն, կոշիկակործութիւն, հիւանդութիւն, ջուլհակութիւն ևն. ևն.) ինչպէս նաև վաճառականութիւնը (խանութպանութիւն, միջնորդութիւն, առևտրական ընդարձակ գործեր, զրամատան գործառնութիւններ) մեծ մասամբ Հայոց ձեռքն են:





Գ. ՄԱՍ

ԹՈՒՐԲԱՆԱՅՔ

25. ՎԱՐՉՈՒՆՆԵ ՐՈՎԱՆՈՒՄ. — 1400 թուականէն սկսեալ, և 1828-29 թ. և 1878 թ. դաշնագրերովը օսմաննան տիրապետութեան տակ անցած են հայկական նահանգներէն հետեւեալները՝ մասամբ կամ ամբողջովին, և բաժնուած են վեց նահանգներու կամ կուսակալութիւններու, հիլիկիայէն զատ, ինչպէս. —

Բարձր Հայք (Բէճախ, Էրզրոննան, Մամախաթուն, Գուրուչայ, Ռաֆանիէ, Շէյրան, Օվաճըզ, Լէզքի, Տէրջան, Բայբուրզ, Զօրմէլի, Մասսա, Էրզրում, Օվա):

Զորբող Հայք (Բգի, Ճապաղջուր, Կիւճ, Զիկտէ, Արզնի, Բայու, Հայնի, Հաղբոյ, Լճէ, Խուլի, Մուֆարգին, Չիկաձազ, Խոզաթ, Խարբուզ, Չնքուշ, Զերմիկ, Ակի):

Աղձնիք (Խարղան, Զուլքան, Բշէրի, Ռնտուն, Տիարպէքիք՝ արեւելեան, Տատիկ, Կիւղէլտէրէ, Կեցան, Աղերզ, Մօսկան, Պիթիա, Սասուն):

Տուրուբերան (Խոյթ, Բանաշէն, Շատախ՝ Մուշի, Սասուն՝ գաւառ, Մուշ, Զուքուր, Վարդով, Գոյնուկ, Խնուս, Թէքճան, Շուշար, Կէօքսու, Անթախի կամ Թուխթաք, Պուլանք՝ վերին, Ախլաթ, Ալճալազ, Կարճկան, Փատնոս, Մալազկերտ):

Մոկի (Սպարկերտ, Կարկառ, Խիզան, Նըզար, Պէրվարի, Մոկս, Շիրվան, Շատախ):

Կորնայք (Նօրաուզ, Պօ՛տան, Ճղիրէ, Պէթէլչապազ, Զուլամերիկ, Զալ, Տրխուպ, Ճէլօ, Կեաւատ):

Պարսկահայք (Շէժտինան, Խումարոյ):

Վասպուրական (Գաւաշ, Ոստան, Վան, Թիմար, Արճէշ, Սարուսու, Զիլան, Բերկրի, Ապազա, Խօշապ, Նօրաուզ, Համգաչիմէն, Պաշքալէ, Մանձուտի):

Տայք (Թօրթում, Կիսկիմ, Նարիման):

Այրարատ (Բասն, Արաշկերտ, Հասան-Գալէ, Տիատին, Պայաղիա):

Փոքր Հայքի երեք նահանգները. —

Առաջին Հայք (Կեսարիա):

Երկրորդ Հայք (Սեբաստիա, Եւզոկիա, Եօզլատ: Զօրում, Զիլէ):

Յրբող Հայք (Մալաթիա, Ամիդ կամ Տիգրանակերտ, Շամշատ, Արաբկիր) :

Հայկական այս նահանգները՝ ազգաբնակչութեան մեծամասնութեան փոքրամասնութեան քաղաքական հաշիւներով, օսմանեան նորագոյն վարչական բաժանումներուն համաձայն՝ կը կազմեն Կարնոյ, Բիթլիսի, Վանայ, Սեբաստիոյ, Սարբերդի ու Տիարպեքիլի կուսակալութիւնները :

Պոստոսի նահանգը, հին Փոքր-Հայքի մասը (Ա. - Դ. դար), կը կազմէ այժմու Տրապիզոնի կուսակալութիւնը (Լազիստան) : Հին Սաղսեաց Գաւառը՝ Պարխար լեռներով հարաւէն և Սեւ Ծովով հիւսիսէն եզերուած, մէկն է Հայ Արշակունի թագաւորներու տիրած նահանգներէն՝ Վրաստանի և Աղուանից հետ :

Բոյոբ այս նահանգներուն աշխարհազրական բնիկ անուններէն մաս մը փոխուած են դարերու ընթացքին անզգալապէս, իսկ վերջին տարիներու հայահալած քաղաքականութենէն ի վեր՝ յատուկ դիտումով : Ահա փոխուած ու բնիկ հայկական տեղանունները . —

26. ԹՈՒՐԿԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԸ . —

Բնիկ հայ անունները	Այժմու փոխուած անունները	Բնիկ հայ անունները	Այժմու փոխուած անունները
Ազն	քղք.	Էկին	Կուաշ
Աղբակ	գււ.	Արցախ, Հեփարի	Կորդրեք
Աղձնիք	»	Պիրիս	»
Անձեւացիք	»	Նօրսուգ	Հողամակերտ քղք.
Ապահունիք	»	Մեղազիւրս	Հողոց վանք
Աստուածաշէն	գիւղ	Խօշապ	Չորոյ վանք
Արզն	գււ.	Խարզան	Ղեւնդուպուխ քղք
Արծիէ	»	Ասիյնկապ	Ճորոխ
Արձէշ	քղք.	Էրձիշ	ձուաշտոտ
Աւարայր	դաշտ	Ապարա	գււ.
Բաբերդ	քղք.	Պարսուր	Մանազկերտ
Բաղրեւանդ	գււ.	Արշիւր	»
Բաղիդ	լեռ	Պեշուգ-դաղ	Մոհք
Բալահովտ	գււ.	Փարս	Նանդ
Բերդեի	քղք.	Պարկիր	լեռ
Բեւրան	լեռ, լեճ	Պիւկոյ	Նփրկերտ
Բուժունիք	գււ.	Խօշապ	Չորբող Հայք
Գաղկայ վանք	»	Չանկիր մանսարրը	Սեբաստիա
Գարանաղի	գււ.	Տեղիս	գււ.
Գու	գիւղ	Թիւյ	Սեւաւերակ
Եղեւիս	քղք.	Ուրխ	Սիփան
Երզնկա	»	Էրզնկան	Սուկուէտ
Լամբրոն	բերդ	Նեմունի ֆայխի	Սպարկերտ
Լէզք	գիւղ	Գարսաղ	գււ.
Խախ	քղք.	Բում-սեւաշր	Վահանաշէն
Խախու	գււ.	Թօրոս	Վաղարշակերտ
Ծաղկեաց լեռ	»	Աշա-սաղ	Վաղարշաւան
Կամախ	բերդ	Քեւախ	Վարազ
Կարկառ	»	Կերկեռ-գալկաի	Վարշամուկ
Կեղի	քղք.	Քըղի	Տաթիկ
			Տիբրիս
			Տիբրեկէ
			Տուարածատաի
			Սե. կամ Թուս
			գիւտ
			Գարա աւ.
			Քեուկաշ
			Քիւրդիսան
			Հասթարի, Պաշ-խաշ
			Տեղե մանսարրի
			Տեղե ֆիխախի
			Հասան-խաշ
			Չիխախ-սու
			Գարա-գոյաւնու
			Մեղիզիւրտ
			Նիսիսիկ
			Միսիս
			Նեպիք
			Մուֆարդիկ
			Չարսանապ
			Սրվազ
			Սեւաւերակ
			Սիփան
			Սուփեան-սաղը
			Քեուկ-սաղ
			Խալկերտ
			Վանիկ
			Արշիւր, Թօփեղ-ֆիկ
			Քեօփիւ-ֆեօյ
			Ենի-ֆիխախ
			Վարսամ-պիկ
			Թարսան
			Տիարպեխ
			Կիլաս, Շար
			Տիփրիկ
			Կոֆ սու
			Գարա աւ.

27. ԹՈՒՐԿԱՀԱՅՈՅ ԹՒՐԸ . — Օսմանեան վարչական բաժանումներովը՝ վեց նահանգներու, Կիլիկիոյ, Փօքր Ասիոյ ու Եւրոպական Թուրքիոյ մէջ բնակող Հայերու վիճակագիրը, զանազան ցուցակներով, կը պատկերանայ ստորեւ . —

Ա. ՅՈՒՑԱԿ

Տարի	Մարդահամարով	Թուրքիոյ Հայոց թիւը	Հմգումը.	Աղբիւրներ
1845	Սուլթան Մէջլիսի	Եւրոպիկ. Թուրքիոյ մէջ Ասիական > >	400,000 2,100,000	2,500,000 Սրխն. Պպոս. Լոյս (*)
1854	Ուրիշիսի	Եւրոպիկ. Թուրքիոյ մէջ Ասիական > >	400,000 2,000,000	2,400,000 Լոյս, Ժամկ.
1872	Օսմ. կառավարութ.	Եւրոպիկ. Թուրքիոյ մէջ Ասիական > >	400,000 1,900,000	2,300,000 Պպոս.
1878	Պատրիարքարանի	4 նահանգներու (Կրն., Վան, Բղշ., Տարնիկ.) Մնացած նահանգներ. մէջ	1,330,000 1,130,000	2,460,000 Պպոս., Սրխն. Զիթ.
1878	Պատրիարքարանի	6 նահանգներու մէջ (Տես է. Յուցակ) Եւրոպիկ. Թուրքիոյ մէջ Փոքր-Ասիոյ մէջ	1,630,000 200,000 835,000	2,665,000 Ժամկ., Լոյս, Պպոս.
1294 (1878)	Օսմ. Սայնամկով	3 նահանգներու մէջ Կարին, Վան Տիգրանակերտ Մնացած նահանգները	1,150,000 180,000 1,380,000	2,710,000 Սրխն., Ասլն.
1882	Պատրիարքարանի	6 նահանգներու մէջ (Տես է. Յուցակ) Եւրոպիկ. Թուրքիոյ մէջ Կիլիկիոյ և Փոքր-Ասիոյ մէջ, միջին Թիւ	1,830,000 210,000 835,000	2,875,000 Վերջին Լուր
1892	Վիտալ Բինէի (Թերի վիճակագրով)	6 նահանգներու մէջ (Տրպզ. փոխան Սվազի) Փոքր-Ասիա (Սվազն ալ մէջը) Սուրիա, Պաղեստին և Միջագետք Եւրոպական Թուրքիա	542,402 568,682 69,982 1,181,066 200,000	1,381,066 Ժամ. Պպոս. (Զ) Զիթ.
1894	Լինչի («Արմէնիա»)	Թերի վիճակագրութիւնով մը	1,058,000	Ժամկ., Պպոս.
1896	Փրոֆ. Վամպէրի	Թերի վիճակագրութիւնով մը	1,131,125	Ժամկ., Լոյս
1912	Պատր. Օրմանեանի	Լուսաւորչականներ Կաթողիկէներ Բողոքականներ	1,766,000 85,000 41,500	1,892,500 Ժամկ., Պպոս.
1913	Պատրիարքարանի և Պոզոս Նուպարի	6 նահանգներուն մէջ Կիլիկիա և Փոքր Ասիա Եւրոպական Թուրքիա	1,048,000 835,000 200,000	2,083,000 Ժամկ., Պպոս. Զիթ.
1913	Լէփսուսի	Ասիական Թուրքիոյ մէջ Եւրոպիկ. > >	1,800,000 200,000	2,000,000 Ժամկ. Ասլն. Զիթ.
1915	Պատրիարքարանի	Ընդհանուր Թուրքիոյ մէջ	2,500,000	2,500,000

(*) Սարուխանի «Հայկ. Խորհր» էջ 426—430, Պիպերոսեանի «Օսմ. Պետութ.» էջ 25—32, Ե. Թօփճեանի «Լոյս» Օրացոյց՝ 1908, «Ժամանակ» օրաթերթ՝ Թիւ 1759, Մարտ 1914, Գ. Ասլան «L'Arménie et les Arméniens», 1914, էջ 119 և 122, «Վերջին Լուր» 1919 Յնվր. 7, Զիթունի մեր կողմէ նոյն այդ աղբիւրներէն համախմբուած թիւեր, Մ. Ուրիշիսի «Lettres sur la Turquie, II», Վիճակ. Գիտ. «La Turquie d'Asie», Փրոֆ. ՎԱՄՊԷՐԻ «Deutsche Rundschau», 1896, Լինչի «Arménia», I. II.

Այսպէսով, վերոյիշեալ պաշտօնական և մասնաւոր տասնեակ վիճակացոյցերուն համաձայն՝ Թուրքիոյ Հայոց ընդհանուր թիւն էր մինչև 1915, միջին հաշիւ, 2,500,000 (ԵՐԿՈՒ ՈՒ ԿԷՍ ՄԻԼԻՈՆ): Որմէ 200,000ը՝ Եւրոպական Թուրքիոյ մէջ, 800,000ը՝ Փոքր Ասիոյ և Պաղեստին-Միջագետքի կողմերը, իսկ շուրջ 1,500,000ը (ՄԷԿ ՈՒ ԿԷՍ ՄԻԼԻՈՆ)՝ հայաբնակ վեց նահանգներուն մէջ:

Բ. ՅՈՒՅՍԿ. — Թուրքահայոց թիւը՝ նահանգական բաժանումով. [միւսնոյն ազգիւրներէն քաղուած]. —

Նահանգ	1845ին	1878ին	1882ին	1892ին	1913ին
Վան		400,000	500,000	80,998 ?	185,000
Պիթլիս		250,000	300,000	131,390 ?	172,000
Կարին	1,630,000	280,000	330,000	133,967 ?	205,000
Խաբէբըզ		270,000	270,000	69,718 ?	168,000
Տգընկըտ.		150,000	150,000	79,129 ?	100,000
Սեւաստիա		300,000	280,000	280,000	—
	1,930,000	1,630,000	1,830,000	495,202 ?	1,048,000
Կիլիկիա	270,000	380,000	1,045,000	838,664 ?	1,035,000
Փոքր-Ասիա	200,000	255,000			
Մ'նցծ. մասեր	100,000	400,000			
Տրապիզոն	—	—	—	47,200 ?	—
	2,500,000	2,665,000	2 875,000	1 381,066 ?	2,083,000

Դժբախտաբար կը պակսին ԱՏՈՅԳ վիճակագրութիւններ՝ Թուրքիոյ մէջ բնակող իսլամ-թուրք, արաբ, քիւրդ և ասորի, յոյն, հրէայ՝ օտար ցեղերու մասին: Կան թէև ղանազան մարդահամարներ (տեսնել Սաբուխանի, Պիպիուճեանի, Ասլանի, «Ժամանակ»ի՝ վերոյիշեալ ազգիւրները), բայց անբաւական են անոնք. բաղդաշական հաշիւներու իբր եղբ չեն կրնար ծառայել, և որ աւելին է՝ դիտումաւոր ու խեղաթիւրուած են յաճախ:

Գ. ՅՈՒՅՍԿ. — (*) Ամբողջ աշխարհի վրայ գտնուող Հայերու ընդհանուր մարդահամարներն ամփոփելով, կ'ունենանք հետեւեալ թիւերը. —

Երկրամաս	Յուշակ	1875-1887	1897ին	1907ին	1915ին	Աճում 40 տարւան մէջ	1919ին
Կովկաս	Ե.	900,000	1,128,973	1,312,584	2,286,486	1,386,486	2,500,000
Թուրքիա	Զ.	2,800,000	1,580,000	1,800,000	2,500,000	—	800,000
Պրսկաստ.	Համար 37	600,000	400,000	100,000	70,000	—	100,000
Հնդկաստ.		40,000		50,000	20,000	—	20,000
Եւրոպա	Արձագանգ Փարիզի, Ամբաստ.	60,000	100,000	35,000	36,000	126,000	50,000
Ամբաստ.				100,000	110,000		110,000
Եւրոպա.				50,000	40 000		50,000
		4,400,000	3,208,973	3,447,584	5,062,486	—	3,630,000

(*) Գործիս տպագրութեան ընթացքին առիթ ունեցայ տեսնելու «Աշխարհագրութիւն Հայաստանի» (Յովհ. Յ. Մեղվունի) գրքոյլը, տպուած 1914ին՝ Մարզում, և որուն տուած մարդահամարէն օգտուեցայ այս ցուցակին ծղղման մէջ. 2.

Ամբողջ աշխարհի վրայ ընդհանուր Հայերու թիւն էր. —

1854ի Ուրիշինի մարդահամարով՝	4,000,000
1892ին Վիտալ Գինէի և Էլիզէ Ռըքլիւի մարդահամարով՝	3,293,779 ?
1912ին Օրմանեան Սրբազանի թեմական մարդահամարով՝	3,654,450 ?
1913ին Գէորգ Ասլանի «L'Arménie»ին մարդահամարով՝	3,810,000 ?
1914ին Յ. Մեղմունիի Աշխարհագրութեան մարդահամարով՝	3,661,000 ?
1915-19 «Արձադանգ Փարիզի» թերթին մարդահամարով՝	4,090,000 ?
1919ին, ըստ վերի Լ. Յուցակին. մերձաւորապէս՝	3,630,000 ?

Այս հաշիւներով, 1915-1919, ընդհանուր պատերազմի չըջանին, ցարդուած, մեռած, փճացած Հայերու թիւը (5,062,486՝ նուազ 3,630,000 = 1,432,486) միև ու կիս միլիոնի կը ձօտենայ: Իսկ ամբողջ աշխարհի վրայ՝ Հայերը կ'ապրին դեռ Երեւոյ Ու ԿէՍ ՄԻԼԻՈՆԷ ԱԻԵԼԻ թիւի մը անփոստելի իրաւունքովը...:

Սակայն նկատի առնենք որ Թուրքիոյ մէջ Հայերու մարդահամարը կատարուած է միշտ քերի ու դիտումներով. այսինքն՝ անձի փոխան՝ տունի հաշուով կատարուած մարդահամարներուն մէջ, միջին հաշուով՝ տունը 5 անձ հաշուած է. մինչդեռ հայկական բազմամէկ իրականութեան ծանօթ եղողները գիտեն որ՝ ամէնէն քիչուր հայ ընտանիքը գոնէ 7—8 անդամէ պակաս եղած չէ Հայաստանի մէջ, իսկ հարիւրին 70—80 ջախջախիչ մեծամասնութիւնը բաղկացած է եղեր 9, 15, 20, 30 անդամէ և գիւղական երգին աակ՝ մինչև 50, 100 ու 150 անդամներէ: Այնպէս որ, անձի հաշուով կատարուելիք սեէ ճշգրիտ մարդահամար պիտի ապագուցէր թէ ամբողջ աշխարհի վրայ Հայերուն իրական թիւն է 2000000000 ԼԻՆԳ ՄԻԼԻՈՆ: Ըշմարտութիւնն առ է:



Վանայ բերդը՝ Երեւան

28. ԹՈՒՐԿԱՀԱՅ ԵՆԵՂՆՑԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ. — Էջմրածնի Մայր-Աթոռի բարոյական իրաւասութեան ենթակայ Թուրքիոյ Հայոց եկեղեցական կազմին մէջ կան երկու ուրոյն կաթողիկոսական աթոռներ, Աղթամար և Կիլիկիա: Նաև երկու Պատրիարքութիւններ, Երուսաղէմի և Կ. Պոլսոյ:

Կաթողիկոսական ու Պատրիարքական այս Աթոռներն ունին հետեւեալ առաջնորդական վիճակներն ու եկեղեցի-վանքերը. —

Գ. ՅՈՒՅԱԿ

Ա. ԱՂԹԱՍԱՐԻ ԿԱԹՈՒՂԻԿՈՍՈՒԹԻՒՆ,
հաստատուած՝ 1114ին, ունեցած է
ցարդ 57 Կաթողիկոս

Թ/ն	ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ՎԻՃԱԿՆԵՐ	Եկեղեցի	Վ.ակն
1	Աղթամար	193	40
2	Խիզան	109	16
		302	56
	Համագումար	358	

Բ. ԿԻՒԻԿԻՈՅ ԿԱԹՈՒՂԻԿՈՍՈՒԹԻՒՆ,
հաստատուած՝ 1440ին, ունեցած է
ցարդ 47 Կաթողիկոս

Թ/ն	ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ՎԻՃԱԿՆԵՐ	Եկեղեցի	Վ.ակն
1	Սիս	6	1
2	Այնթապ, Բիւիս	8	—
3	Անթաքիս	13	—
4	Ատանա, Պէրէքէթ	23	—
5	Հալէպ, Իսքէնտէրուն	4	—
6	Մարաշ	24	—
7	Եօզլատ	45	—
8	Հաճըն	6	1
9	Մալաթիա	20	2
10	Կիւրին, Մանճըլք	25	1
11	Ձէյթուն, Յունուզ	30	4
12	Տարէնտէ	6	1
13	Տիվրիզ	14	2
		222	12
	Համագումար	234	

Գ. ԵՐՈՒՍԱԿԷՄԻ ՊԱՏՐԻԱՐԿՈՒԹԻՒՆ,
հաստատուած՝ 637ին, ունեցած է
ցարդ 90 Պատրիարք

Թ/ն	ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ՎԻՃԱԿՆԵՐ	Եկեղեցի	Վ.ակն
1	Երուսաղէմ	9	8
2	Գամասիոս (Նաւ)	1	—
3	Յոզպէ (Եաֆա)	1	1
4	Պէյրութ	1	—
5	Կիպրոս	2	1
6	Լաթաքիա	1	—
		15	10
	Համագումար	25	


Դ. Կ. ՊՈԼՍՈՅ ՊԱՏՐԻԱՐԿՈՒԹԻՒՆ,
հաստատուած՝ 1461ին, ունեցած է
ցարդ 108 Պատրիարք

Թ/ն	ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ՎԻՃԱԿՆԵՐ	Եկեղեցի	Վ.ակն
1	Ազն	10	5
2	Աղբակ	26	7
3	Ամասիա-Մարզուան	24	1
4	Արաբկիր	19	1
5	Արղընի-Չընքուշ, ԲԱԼՈՒ	—	—
6	Արմաշ	2	1
7	Բաբեղդ	30	1
8	Բալու, Չընքուշ, Արղընի	54	4
9	Բաղէշ	43	11
10	Բասեն, ԿԱՐԻՆ	—	—
11	Գասթերմունի	5	—
12	Դերջան, ԿԱՐԻՆ	—	—
13	ԵԳԻՊՏՈՍ	5	—
14	Եղեւսիա (Ուրֆա)	7	2
15	Երզնկա	33	11
16	Էնկիւրի	24	1
17	Էտիւրնէ	5	—
18	Թոքատ (Եւզուկիա)	19	2
19	Իզմիր	12	—
20	Խարբերդ	72	5
21	Խոնու	20	2
22	Կարին, Բասեն, Դերջան	133	8
23	Կեսարիա	28	3
24	Կիւս	19	—
25	ԿՐԵՏԷ	1	—
26	Ճանիկ	22	—
27	Մուշ	102	9
28	Նիկոմիդիա	46	—
29	Շապին-Գարահիսար	32	3
30	Չարսանճազ	70	2
31	Չիչլիճազ	19	3
32	Պանտըրմա-Պալքքէսիք	8	—
33	Պաղտատ	6	—
34	Պայազիս, Ալաշկերտ	32	1
35	Պէլէկէս	3	1
36	Պիլէճիկ	6	—
37	ՊՈՒԼԿԱՐԻՍ	15	—
38	Պրուսա	12	—
39	ՌՈՒՄԱՆԻԱ	11	—
40	Ռօտտթօ (Թէքերտաւլ)	8	—
41	Սերասիսիա	46	6
42	ՍԵԼԱՆԻԿ	1	—
43	Սղերդ	32	1
44	Վան	115	25
45	Տիգրանակերտ	83	5
46	Տրապիզոն	36	3
47	Քէմախ	11	6
48	Քէօթահիա (Կուսիմա)	5	—
49	Քոն	47	4
50	Կ. ՊՈԼԻՍ Պատրիարք. Աթոս	25	—
		1388	134
	Համագումար	1522	

Ամփոփելով թուրքահայ եկեղեցական թեմերուն հաշիւը՝ կ'ունենանք. —

Ա. Ազթամարի Կաթողիկոսութեան մէջ	358	թեմ
Բ. Կիլիկիոյ	234	»
Գ. Երուսաղէմի Պատրիարքութեան մէջ	25	»
Դ. Պոլսոյ	1522	»
	<hr/>	
Ընդ ամէնը	2139	»
Ամերիկայի ու Եւրոպայի Հայոց եկեղեցիները	20	»
Էջմիածնի Մայր-Աթոռի թեմերը (տես համար 22)	1091	»
	<hr/>	
Ամբողջ աշխարհի վրայ՝ հայ եկեղեցական թեմերուն թիւը	3250	»

Տեսնել նաև ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՆՔԵՐԸ, համար 17:



Դրնիկի կամուրջը

* Հայ-Կաթողիկոսներն ունին Պոլսոյ Պատրիարքական Աթոռին ենթակայ 25 Առաջնորդական Վիճակներ, ինչպէս՝ Ատունա, Դամասկոս, Եգիպտոս, Երուսաղէմ, ԶՅմար, Էնկիւլի, Իզմիթ, Իզմիր, Խարբերդ, Կարին, Կեսարիա, Հալէպ, Մալաթիա, Մարաշ, Մէրսին, Մուշ, Պաղտատ, Պանարմա, Պարտիզակ, Պէյրութ, Պրուսա, Սվազ-Թոքատ, Վան, Տիզրանակերտ, Տրապիզոն:

Հայ-Կաթողիկ Միաբանութիւններ են՝ Վենետիկի և Վիեննայի Միութեամբ, և Պոլսոյ ԱՆՏՈՆԵԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ:

* Հայ-Քողոքականներն ունին Պոլսոյ Ազգապետարանին իրաւասութեան տակ՝ Բիւթանիոյ, Խարբերդի ու Կիլիկիոյ եկեղեցական Միու-

թիւները, իսկ Թուրքիոյ ուրիշ կարեւոր քաղաքներու մէջ՝ Աւետարանական մատուռ-ժողովարաններ: Արտասահմանի մէջ, Եւրոպա, Ամերիկա, Ռուսիա, Պարսկաստան, Հնդկաստան, Եգիպտոս, ունին նոյնպէս եկեղեցի-ժողովարաններ:

29. ԹՈՒՐԿԱՆԱՅ ԿՐԹԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ. — Կ. Պոլսոյ ու Երուսաղէմի Պատրիարքութիւններու, և Աղթամարի ու Կիլիկիոյ Կաթողիկոսութիւններու իրաւասութեան տակ՝ վանական-եկեղեցական, թաղային-ծիակական, կամ մասնաւոր պիւտճէներով՝ կը մատակարարուին 1000ի չափ նախաիրթարաններ և 4 միջնակարգ վարժարաններ, հետեւեալ կերպով. (քաղուած՝ մասնաւոր վիճակացոյցերէ և Տարեցոյցներէ 1887էն մինչև 1904, և 1911). —

Ե. ՅՈՒՅԱԿ

ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ՎԻՃԱԿՆԵՐ	Վարժմ.	Մանչ	Աղջկ				
				Շապին-Գարահիսար	27	2240	165
				Չարսանձաք	12	617	189
				Չմշկածաղ	12	456	268
				Պանտրմա-Պալքքէսիք	8	700	634
				Պաղտատ	2	68	46
				Պայազիտ, Ալաշկերտ	8	538	84
				Պիլէճիկ	10	1120	143
				Պրուսա	17	1682	733
				Ռօտոսթօ	9	1017	856
				Սեբաստիա	52	5872	1782
				Սիս և շրջակայները	7	476	165
				Սղերք	5	185	86
				Սպեր, Կիսկիմ	18	390	228
				Վան	120	6845	1854
				Տարէնտէ	4	280	90
				Տիգրանակերտ	6	390	524
				Տիվրիկ	14	752	90
				Տրոպիզոն	47	2184	918
				Քէմախ	15	846	128
				Քէօթահա	8	825	349
				Քոն	29	1536	387
				Համադուճար	1016	74796	25858
				Պլայ թղջն, վրժ. քերկա.	40	2877	2046
				» պետի. » հայ	—	250	—
				» ալլևալլ » »	—	400	100
				» օտար » »	—	300	500
				» Որընց. — Արևասանց.	—	50	100
				Ընդ. ամէնը		78673	28604
				Եգիպտոս	4	450	430
				Կիպրոս	3	65	40
				Կրետէ	1	20	10
				Պուլկարիա	10	850	730
				Ռումանիա	4	100	80
				Ամերիկա	5	200	150
				Աճտղճ՝	1083	80358	30044

Այս թիւերը՝ չատ գաւառներու համար՝ իրականէն պակաս են: Նկատի առնելով կարգ մը նահանգներու հայ վարժարաններուն և ուսա-

նորներուն աճումը, մասնաւորապէս 1908ի Օսմ. Սահմանադրութենէն յետոյ, կրնանք վստահարար բարձրացնել թուրքահայ վարժարաններուն թիւը 1500ի, իսկ երկսեռ աշակերաններուն համազուտմամբ՝ կրոր հաշիւ՝ 120,000ի: Ընդունելով թուրքահայոց թիւը 2 1/2 միլիոն՝ ամէն մէկ 20 անձին կ'իյնայ մէկ ուսանող:

4 Միջնակարգ վարժարաններ	Բացում	Ուսուցիչ (1900-1909)	Ուսանող (1900-1909)
Պէրպէրեան, Իւսկիւտար	1876	11	120
Սանասարեան, Կարին	1881	16	190
Կեղրոնական, Կ. Պոլիս, Ղալաթիա	1886	16	56
Արմաշի Դպրեւանք	1889	8	30
Համաշուժար՝		51	396

Միջնակարգ այս չորս վարժարաններէն յետոյ հիմնուած է նաև «Նոր-Դպրոց» ի Կ. Պոլիս 1908ին:

Այս վարժարաններուն ուսանողութեան թիւը տարւէ տարի կը բարձրանայ կամ կը նուազի՝ տեղական պայմաններուն համեմատ:

30. ԹՈՒՐԿԱՆԱԿ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ. — Ժ.թ. ըզ դարու կիսուն կ'սկսի տեղի տալ գրարարը: Արծաթի դարէն ժառանգ մնացած ուսմկօրէնն առաջ կ'անցնի, կը յլիւթի, կը կազմէ աշխարհարար արդի լեզուն: Գրականութիւնը ժողովրդական կը դառնայ. ֆրանսական մեծ Յեղափոխութեան հօր շունչին տակ, ինչպէս Կովկասահայոց՝ այնպէս ալ թուրքահայոց մէջ կ'սկսի ծաղկիլ նոր գրականութիւն մը:

Գրական այս վերածնունդին վառարաններ կը հանդիսանան Կ. Պոլիս, Իզմիր, Վենետիկ, Վիեննա, Վան, Խարբերդ, Սերաստիա, Գահիրէ, Փարիզ, ու երևան կուգան ըստմամբիւ գրական զէմքեր, — վիպասան, թատերագիր, բանաստեղծ, ազգագիր, հրապարակագիր-օրագրող, թարգմանիչ, պատմագիր, դասագիր, հասարակական գործիչ ևն. —

- Ալիբեան Հ. Ղեւոնդ (1820—1901) բանաստեղծ. հնարիտ, պատմագիր
- Աղեփանդը Փանոսեան (1858) բանաստեղծ
- Ասոււաճաճուր Խաչատուրեան (1867) լեզուաբան, բանասէր, պատմագէտ
- Ասով Եսրեանեան (1877—1915) բանաստեղծ
- Արամ Անճոնեան (1882) հրապարակագիր, դասագիր
- Արամ Չարբդ (1870) բանաստեղծ
- Արմենակ Հայկունի (1835—1866) հրապարակաշիր
- Արեակ Ալպոյանեան (1879) բանասէր
- Արեակ Չօպանեան (1872) բանաստեղծ, բանասէր, հրապարակագիր
- Արսէն Այսրեան (Հ.) (1824—1902) բանասէր, քերականագէտ
- Արսէն Ղազիկեան (Հ.) (1870) բանասէր, թարգմանիչ, բանաստեղծ
- Արսաեւ Յարութիւնեան (1873—1915) բանաստեղծ, հրապարակագիր
- Արփիար Արփիարեան (1850—1908) հրապարակագիր, վիպագիր, գործիչ
- Բարբէն Եպիսկ. Կիլիկեան (1868) բանասէր
- Բիւզանդ Պօզանեան թարգմանիչ
- Բիւզանդ Քէչեան (1859) հրապարակագիր

- Գաբրիել Վ.դ. Մենկլիբեան (Հ.) (1864) *բանասէր, դասագիր*
 Գագիկ Օզանեան (1882—1915) *բանասէր*
 Գաբեգին Զարբանեկեան (Հ.) (1827—1901) *բանասէր, լեզուարան, պատմագիր*
 Գաբեգին Եպիսկ. Սրուանձեան (1840—1892) *ազգագիր, բանասէր*
 Գեղամ Տեր Կարապետեան (1873—1918) *բնաշխարհի գրագէտ*
 Գեարգ-Մեարոպ (1881) *բանասէր, դասագիր*
 Գրիգոր Զօհրապ (1860—1915) *վիպագիր, հրատարակագիր*
 Գրիգոր Մաւրեան (1846—1893) *բանասէր*
 Գրիգոր Զիլինկիրեան (1839) *թարգմանիչ*
 Գրիգոր Օսեան (1834—1887) *գրագէտ, ազգային գործիչ*
 Դանիել Վարուժան (1888—1915) *բանաստեղծ*
 Դաւիթ Խաչկունց (1860—1918) *բանասէր, հրատարակագիր, դասագիր*
 Եղիա Տեմիրեխպետեան (1845—1908) *բանաստեղծ, իմաստասէր*
 Եղիշե Եպիսկ. Գուրեան (1860) *բանասէր, բանաստեղծ, մատենագիր*



Արս. Եարուբիւնեան



Գրիգոր Զօհրապ



Գագիկ Օզանեան

- Երուանդ Օսեան (1869) *երգիծարան, հրատարակագիր, վիպասան*
 Զապէլ Աասուր (Տկն.) (1863) *բանաստեղծ, հրատարակագիր*
 Զապէլ Եսայեան (Տկն.) (1876) *վիպագիր*
 Թեոդիկ Լապինկեան (1878) *հրատարակագիր, մատենագիր*
 Պիկասինցին (Յովհ. Յարութիւնեան) (1860—1915) *բնաշխարհի գրագէտ, դաստիարակ*
 Թովմաս Թերզեան (1838—1909) *բանաստեղծ, թատերագիր*
 Լեւոն Բաշալեան (1868) *հրատարակագիր*
 Լեւոն Սեղբոսեան, Շանթ (1869) *բանաստեղծ, վիպագիր, թատերագիր*
 Խաչատուր Մխաթեան, Պուհ (1815—1899) *բանաստեղծ, ուսուցիչ*
 Խաչիկ Լեւոնեան (1863—1918) *բնաշխարհի գրագէտ, ազգագիր*
 Խորեն Եպիսկ. Նար.Պեյ (1831—1892) *բանաստեղծ, բեմախօս*
 Խրիմեան Հայրիկ (1820—1907) *գրագէտ, մատենագիր, մեծ գործիչ*
 Կարապետ Բամաշեան (1863) *բանասէր, լեզուարան, մատենագիր*
 Կարապետ Գաբիկեան (1868) *բնաշխարհի գրագէտ, ազգագիր*
 Կարապետ Թումանեան (ՓրօՖ.) (1858) *հրատարակագիր, գործիչ*

- Կարապետ Իւրինեան (1823—1904) *Թարգմանիչ, հրապարակագիր*
Հրանտ Ասատուր (1862) *բանասէր, հրապարակագիր, դասագիր*
Մաղափա Եպիսկ. Օրմանեան (1841—1918) *աստուածաբան, պատմագէտ, բանասէր*
Մանուէլ Միւրախորեան (1855) *ուղեգիր, ազգագիր*
Մասաթիա Գարագաւեան (1818—1903) *մատենագիր, պատմագիր*



Մելիսն Կիւրենեան



Դանիէլ Աւորուժան



Յովհ. Գագաննեան

- Մասթոս Մամուրեան (1830—1901) *մատենագիր, հրապարակագիր, Թարգմանիչ, ուսուցիչ*
Մարկոս Աղաբեգեան (1843—1908) *հրապարակագիր, պատմագէտ*
Մելիսեղեկ Մուրաշեան *մատենագիր, ուսուցիչ*
Մելիսն Կիւրենեան (1855—1915) *հրապարակագիր, ուսուցիչ*
Մեսրոպ Նուպարեան (1842) *Թարգմանիչ, բառագիր*
Միհրան Յովհաննէսեան (1855) *բանաստեղծ, մատենագիր, ուսուցիչ*
Մինաս Չեբազ (1852) *հրապարակագիր, գրագէտ, գործիչ*
Միսաք Գոչունեան, Գասիմ (1863—1913) *հրապարակագիր, վիպագիր*
Միսաք Մեծաբեկ (1885—1908) *բանաստեղծ*
Միխայիլ Մինասեան (ՓրօՅ.) (187.) *գիտնական, հրպրկգ., մատենագիր*
Մկրտիչ Անեմեան (1838—1914) *բանաստեղծ*
Մկրտիչ Պեքիկբաշեան (1827—1868) *բանաստեղծ, թատերագիր, գործիչ*
Մկրտիչ Փօրթուզալեան (1848) *հրապարակագիր, ուսուցիչ, գործիչ*
Մուսեղ Եպիսկ. Սերոբեան (187.) *հրապարակագիր, մատենագիր*
Յակոբ Պարոնեան (1842—1891) *երգիծարան*
Յակոբոս ձենիկեան (ՓրօՅ.) (1846) *բեմասաց, գրագէտ, հրապարակագիր*
Յակոբոս Տաւեան (Հ.) (1866) *գիտուն, բանասէր, լեզուաբան, մտնգր.*
Յարութիւն Ալվիար (1864) *երգիծարան*
Յարութիւն Մրմրեան (1860) *մատենագիր, բանասէր*
Յովհաննէս Գագաննեան (1870—1915) *բանասէր, հրպրկգ., լեզուաբան*
Յովսէփ Շիբամեան (Տֆր.), *Մերենց* (1832—1888) *վիպագիր, հրպրկգիր.*
Նազարէր Տաղաւարեան (Տֆր.) (1863—1915) *բանասէր, մտնգր., գիտուն*
Նանայեան Ռուսինեան (1819—1876) *խմաստասէր, բեմախօս, գործիչ*
Նիկողայոս Զօրայեան (1821—1858) *հրապարակագիր, տնտեսագէտ*

Նորայր Բիւզանդացի (1845) բանասէր, բառագիր, լեզուագէտ
 Պետրոս Աղամբան (1842—1891) դերասան, գրագէտ
 Պետրոս Դուրեան (1852—1872) բանաստեղծ, թատերագիր
 Ռեքեոս Պեդպեան (1850—1907) ուսուցիչ, հրատարակագիր, մանգր.
 Ռուբեն Զարդարեան (1874—1915) հրատարակագիր, գործիչ
 Ռուբեն Որբեան (1874) բանաստեղծ



Ռ. Զարդարեան



Ն. Տաղաւերեան



Ա. Զիլիկիլիւսեան

- ✓ Ռուբեն Զիլիկիլիւսեան (1885—1915) բանաստեղծ, արձակագիր
- Սեռովբէ Տերվիճեան (Հ.) (1846—1892) լեզուաբան, բանասէր
- Սիմեոն Երեմեան (Հ.) (1871) մատենագիր, հրատարակագիր
- ✓ Սմբատ Բիրստ (1862—1915) հրատարակագիր, վիպասան
- Սուրեն Պարբեան (1876) հրատարակագիր, վիպագիր
- Սեփան Ոսկան (1825—1901) հրատարակագիր, օրագրող
- Սրբունի Տրւսաբ (Տկն.) (1842—1901) հրատարակագիր, վիպագիր
- Վահան Թեֆեան (1878) բանաստեղծ, հրատարակագիր, գործիչ
- Վահան Մալեգեան (1873) բանաստեղծ, հրատարակագիր
- Վահան Վրդ. Տեր-Մինասեան (1850—1909) երգիծարան, առակագիր
- Վահրամ Թորգոմեան (Տֆր.) (1858) բանասէր, գիտուն, մատենագիր
- Վիքթորիա Ազանուր (Տկն.) (186.—1910) բանաստեղծ
- Տիգրան Ամիրջանեան (1860—1894) բանաստեղծ, թատերագիր, ուսուցիչ
- Տիգրան Նրկաբ (1870—1899) հրատարակագիր, գործիչ
- Տիգրան Կամսարական (1866) հրատարակագիր, վիպագիր
- ✓ Տիգրան Զեօկիլիւսեան (1885—1915) ուսուցիչ, վիպագիր
- Տիգրան Զիբունի (1881) ընայխարհի գրիչ, աղագիր, բանասէր
- Տիրան Զրաֆեան (1875) իմաստասէր, արձակագիր
- Քասիմ տեանել Միսաք Գոչունեան
- Օննիկ Զիմրե-Սարաֆ (1873) հրատարակագիր, վիպագիր, թարգմանիչ

* * Բազմաթիւ ուրիշներ ալ, որոց մասին՝ յառաջիկայ առիթով :

31. ԹՈՒՐԵԱԼԱՅ ՄՍՄՈՒԼԸ (Publications, Journaux). — Անդրանիկ հայ լրագիրը, Ազդարար, հրատարակուած է մայր-հայրենիքէն դուրս, Հնդկաստանի Մատրաս քաղաքին մէջ 1794ին : «Հայերը իրենց

այս առաջին լրագրովը, կը դառնան աշխարհիս քաղաքակրթուած ազգութիւններու մէջ 12րդ տեղը գրաւող ժողովուրդ մը, որ շատ մ'ուրիշ քաղաքակրթուած ազգերէ առաջ, նոյն իսկ Ամերիկայէն ու Յունաստանէն ալ առաջ, լրագիր ունեցած է: Ազգարարի հրատարակիչ Շիրազեցի (Պարսկաստան) Յարութիւն քահանայ Շմառնեանն այս կերպով պատմական թուական մը բացած է Հայ Մամուլին էջերուն մէջ:

Թուրքահայոց մէջ առաջին լրագիրը հրատարակուած է 1830ին 'ի Կ. Պոլիս, Լոյս Գիր Մեծի Տիրութեան Օսմ. անունով: Ապա Վենետիկ, Իզմիր, Վան, Մուշ, Երուսաղէմ և յաջորդաբար ուրիշ քաղաքներ ունեցան իրենց պարբերականները: Աւասիկ այս թուականէն ի վեր լոյս տեսած թուրքահայ օրաթերթերուն, շաբաթաթերթերուն և ամսաթերթերուն այրենական ցանկը. —

Ազատամարտ	Պոլիս, 1909	Գրիչ	Պոլիս, 1910
Ազդակ	» 1908	Դաշինք	Իզմիր, 1909
Ազդարար Բիւզանդեան	» 1840	Դիմակ	» 1862
Ախալիր Գոսթանթինիէ	» 1855	Դիտակ Բիւզանդեան	Պոլիս, 1812
Ամսօրեայ Տեղեկատու	» 1911	Եղանակ Բիւզանդեան	» 1804
Աշխատանք	Իզմիր, 1910	Երեւակ	» 1857
Աշխատանք	Վան, 1909	Երեւան	» 1918
Ապագայ	Պոլիս, 1910	Երկրագունդ	» 1870
Առաւօտ	» 1910	Երկիր Ատափազար — Պոլիս, 1910, 11	
Առեւտուր	» 1900	Երկրագործական Հանդէս	» 1910
Ասիա	» 1872	Եւրոպա	» 1850
Աստղիկ Արեւելեան	» 1855	Եփրատ	» 1869
Աստղ Բեթլէհէմի	» 1911	Զեփեւո Հարեներաց	» 1862
Արարատ	» 1869	Զուարճախօս	» 1856
Արեւելեան Դար	» 1860	Զուռնա	» 1911
Արեւելեան Մամուլ	Իզմիր, 1871—1909	Զօհալ	» 1855
Արեւելք	Պոլիս, 1884—1909	Էվրագը Շարգիէ	Կարին, 1867
Արժիւ Վասպուրական	Պոլիս, 1855	Էրիզա	Պոլիս, 1868
»	Վան, 1856	Ընտանի Իմաստասէր	» 1854
Արժուիկ Տարօնոյ	Մուշ, 1863	Թագվիմը Վազախ	» 1892
Արշալոյս	Իզմիր, 1911	Թէրճէմանը Էֆրեար	» 1877-8
Արշալոյս Արարատեան	» 1840	Թութակ Հայկ. զնետան	Իզմիր, 1855
Արփի Արարատեան	» 1853	Թոջիկ Ամսօրեայ	Պոլիս, 1861
Աւետարեր	Պոլիս, 1844	» Տոճիերէն	» 1868
Աւետարեր	» 1855	» Պեղատեան	» 1863
Բանասէր	» 1851	Թատրոն	» 1874
Բժիշկ	Տրապիզոն — Պոլիս, 1910	Ժամանակ	» 1863
Բիւզանդիոն	» 1896	Ժամանակ	» 1908
Բիւթանիա	Իզմիր, 1910	Ժողովուրդ	» 1918
Բիւրակն	Պոլիս, 1884—1903	Իրաւունք	Իզմիր, 1868
Բողոք	Պոլիս, 1911	Լիլա	Պոլիս, 1909
Բուրաստան Ա. Սահակեան	» 1851	Լուսարձակ	» 1911
Բուրաստան Մանկանց	» 1882	Լուսափայլ	Իզմիր, 1864
Գաղափար	» 1909	Լոյս	Պոլիս, 1872—73
Գարուն	» 1909	Լոյս	» 1908
Գարուն Հայաստանի	Իզմիր, 1862	Լոյս	Վան, 1911
Գրկն. և Իմաստըրկն. Շրժա. Պոլիս, 1880-88		Լրագիր	Պոլիս, 1875

Լրագիր	Պոլիս, 1832—33	Մուսայբ Մասեաց	Պոլիս, 1857—62
Լոյ Գիր	» 1838	Յայտարար	» 1847
Խարազան	» 1908	Յառաջ	Կարին, 1910
Խիկար	» 1884 90	Յաւերժահարս	Իզմիր, 1862
Խոռոսավէտտիկերար	Պրուսի, 1869	Յիշատակարան	Պոլիս, 1808
Ծաղիկ	Իզմիր, 1861	»	» 1910
» Սաքայեանի	Պոլիս, 1886	Յգս	Արմաշ, 1864
» Զօպանեանի	» 1895	Նոյեան Աղաւնի	Պոլիս, 1852
» Կանանց	Պոլիս, 1905-08	Նոր Այգ	Մարզուան, 1912
Ծիածան	Պոլիս, 1866	Նոր Աշխարհ	..., 190?
»	» 1909	Նոր Բեմ	Պոլիս, 1910
Ծիլն Աւարայրի	» 1866	Նոր Դար	» 1918
Կայծ	» 1911	Նոր Կեանք	» 1918
Կառափնատ	» 1909	Նոր Հայաստան	» 1918
Կավուօշ	» 1908	Նոր Հոսանք	» 1909
Կիթառ	» 1864	Շանթ	» 1911
Կիլիկիա	» 1861	Շարժում	» 1882
Կիկօ	» 1909	Շիրակ	» 1909
Կոհակ	» 1909	Շող	» 1910
Հայաստան	Պոլիս, 1846—1852	Շտեմբն. Պանի. Դուրեց. Իզմիր, 1839-54	
Հայ Գրականութիւն	Իզմիր, 1911	Ոստան	Պոլիս, 1911
Հայկունի	Մարզուան, 1910	Ովասիս	Վան, 1909
Հայրենիք	Պոլիս, 1870—1896	Ուտումարան	Պոլիս, 1911
»	» 1891	Ձէզըք	» 1910
»	» 1909	Պատկեր	Պոլիս, 1890—1899
»	» 1918	Պարտիզակ	Պոլիս, 1912
»	» 1908	Սատուն	» 1909
Հայրենիքի Քնար	Իզմիր, 1850	Սէտայը Հաղիզաթ	» 1870
Հայրենասէր	Իզմիր, 1843	Սէր	» 1860
»	» 1890	Սիօն	Երուսաղէմ, 1866
Հանրագիտակ	Պոլիս, 1890	Սուրհանդակ Բիւզանդեան	Պոլիս, 1848
